



« Խօսք » եւ « լոյս » երկու համանման բառեր են նախնական սրբազան լեզուին մէջ : Եւ առանց պատճառի չէ այդ : Լոյսը կերպով մը բնութեան խօսքն է : Եւ խօսքն ալ մտքին լոյսն է : Տիեզերքը մտիկ կ'ընէ եւ կը պատասխանէ : Յաւիտեանական խօսակցութիւն մը կ'անցնի բնութեան եւ հոգիին միջեւ : Ե՞՞՞՞՞ հոգին չճարգամանէր, չլուսաւորէր ինչ որ միւսը կ'ըսէ, այդ չհասկցուած մտին բնութիւնը չեղածի պէս պիտի ըլլար :

Ժ. ՄԻՇԼԷ

# ԲԱՅՈՒԱԾ Է՝ «ԱՆԱՀԻՏ» Ի

Չ Ո Ր Ր Ո Դ

Տ Ա Ր Ե Մ Բ Ջ Ա Ն Ե

## ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ ԿԱՆԻԿ ՊԷՏԲ Է ՎՃԱՐԵԼ

Այն բաժանորդները որ երրորդ տարուան բաժեզինը չեն վճարած, կը խնրենք հաճին անյապաղ վճարել զայն՝ եթէ կ'ուզեն որ այսուհետև շարուակեն Աանհիս ստանալ:

### ԱԶԴԵՐ

#### ՄԱՏԵՆԱԳԱՐԱՆ ԱՆԱՀԻՏ

ԹԻՒ 1

ԱՆԱԹՈՂ ՖՐԱՆՍ

ԵՊԻԿՈՒՐԻ ՊԱՐՏԵԶԸ

(ՀԱՏՈՒՎԾՆԵՐ)

ԹԱՐԴՄԱՆԵՑ  
Ա. Զ.

Գին 1 ֆրանկ

ԹԻՒ 2

ԱՂՖԵՐՏ ՏԸ ՎԻՆԵԻ

ՔԵՐԹՈՒԱԾՆԵՐ

ԹԱՐԴՄԱՆԵՑ  
Ա. Զ.

Գին 1 ֆրանկ



ԱՏՈՄ ԵԱՐՃԱՆԵԱՆ

ՊԻԵՏԱԶՆՕՐԵՆ

Գին 1 ֆրանկ

Գինի՝ M. A. YARDJANIAN  
8, Rue des Lyonnats Paris.

ՎԱՀԱՆ ԹԷԿԵԱՆ

ԼՈԳՍԵՐ

Գին 3 ֆրանկ

Գինի՝ M. VAHAN TÉKÉIAN  
6, rue d'Arcole, Marseille.

# ԱՆԱՏԻՏ

Հ Ա Ն Դ Է Ս Ա Մ Ս Ե Ա Յ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ

Դ. ՏԱՐԻ

ԱՊՐԻԼ 1904

ԹԻԻ 4

## ԴԷՄՔԵՐ

### Հ. ՂԵԻՌՆԴ ԱԼԻՇԱՆ

— 0 —

Գործը զոր կը թողու Ալիշան, հսկայ յիշատակարան մըն է անխոնջ աշխատասիրութեան, մշտավառ ու բեղմնաւոր հետաքրքրութեան, կաթողին ու խանդոտ զգայնութեան, զոգտը ու թեւաւոր երեւակայութեան, — գործ հայրենասէրի, կրօնաւորի, հմուտի, ընդհանրացուցչի, թարգմանչի, բայց ամէն բանէ առաջ՝ «բանաստեղծ» : Եւ յոյն իսկ տեղագրական, պատմական, երկասիրութիւնները «գիտական» հանդամանք չունին՝ այդ բանին որոշ առումովը, «բանաստեղծութիւն» են միշտ՝ այնչափ որչափ իր «նուագներ»ը : Համակ խանդ ու երեւակայութիւն, Ալիշան չունէր վերլուծումի կարողութիւնը, — անհրաժեշտ պայմանը «գիտական» աշխատութեանց : Բայ ի հին Հայաստանի աշխարհայրութեան նուիրուած իր աշխատութիւններէն, որոնք հեղինակութիւն կրնան համարուիլ՝ գիտական տեսակէտով, իր միւս գործերն աւելի սրտով քան մտքով խորհող մարդու մը արտադրութիւններն են : Կատարեալ գիտունը պէտք է անշուշտ մտքին հետ ունենայ եւ սիրտը, վերլուծման հետ եւ երեւակայութիւնը, — որովհետեւ առանց ատոր գիտունը կ'ըլլայ պարզ գործաւոր մը, անկարող՝ լայն հայեացքներու եւ մեծ հետեւութիւններու : Բայց

միմիայն սրտով մարդ «գիտուն» չի կրնար ըլլալ : Բանաստեղծութեան մէջ, սիրտը կը բաւէ յաճախ, կարեւորագոյն տարրն է գոնէ, (թէպէտեւ ամենէն վեհ ներկայացուցիչները մարդկային բանաստեղծութեան ամենէն բարձր տեսակին, անոնք են որ կրցած են սիրտը մտքին միացնել, ինչպէս Սոփոկլէս, Լուկրետիոս, Շէքսպիր, Կէօթէ, Շէլլի, Լէոբարտի, Պոտէր, Լըքոնթ տը Լիլ :

Ալիշան սիրտ մըն էր, բայց շատ մեծ սիրտ մը : Այդ սիրտը ամբողջապէս լեցուած էր երկու պարզ ու մեծ զգացումներով, Աստուծոյ սէրն եւ ազգին սէրը, — ոչր որ խորհրդածութեան արդիւնք չէր, քննադատութեան չէր, ենթարկած ինքզինքը : Կը հիմնուէր միմիայն աւանդութեան վրայ : Բոլոր հաւատալիքները, բոլոր զրոյցները զոր նախահայրերն իրեն թողած էին, գաղափարը զոր կազմել տուած էին պայծարեւոր աւանդութիւնները՝ Աստուծոյ, աշխարհի, կեանքի եւ հայկական պատմութեան վրայ, անվիճելի իրականութիւններ էին, միակ իրականութիւնն էին՝ իրեն համար, ամէն ինչ սր գրած էին բոլոր հայ պատմագիրներն ու քրոնիկագիրները, վերջնական ճշմարտութիւններ էին՝ իր աչքին : զերագոյն գրքերը իրեն համար Աստուծաշուռնչն ու Խորենացին էին, զիրենք մեկնող, լուսաբանող, պատկերազարդող, շարունակող, երգաբանող բոլոր գրքերով մէկտեղ, այդ երկու գրքերուն ամէն մէկ էջը սրբազան՝ ամէն մէկ բառը յաւիտենականօրէն ճիշդ էր ըստ իրեն : «Կը տառապեմ, կ'ըսեն զինքը մօտէն ճանչցողները, երբ կը տեսնէր եւրոպացի կամ ճայ քննադատները որ Խորենացւոյն կառու-

ցած չէնքը կը քայքայէին» :

Եւ այդ երկու սէրերը Ալիշանի հողոյն մէջ սերտորէն իրարու կապուած էին, կամ աւելի ճիշդ՝ իրարու խառնուած, իրարու հետ ներքնապէս ընդելուզուած ու գրեթէ միակ զգացում մը դարձած էին, առանց սակայն իրենց ուրոյն անհատականութիւնը բոլորովին կորսնցնելու, քիչ մը նման այն երկու բնութիւններուն որ՝ ըստ աստուածաբաններուն՝ Քրիստոսի մէջ անշփոթօրէն միանալով միակ անձ մը կը կազմեն : Իր աշխարհայեցողութիւնը, այս պարզ հիմունքին վրայ հիմնուած, շատ պարզ էր : — Հայաստանը աշխարհիս կեդրոնն էր իրեն համար, օրհնեալ «բնագաւառը», ուր Աստուած բնակեցուց առաջին մարդը, Հայկի նախահայրը, Ադամը, որ արդէն Հայ էր, եւ կը խօսէր լեզու մը որ հայերէնին նախահայրն էր :

Մեր տէրն է յերկնաց ծայրէն երբ իջաւ,  
Երկրիս հիման քարն յԱրարատ դրաւ :  
... Ի Հայոց հողէն կազմեցաւ Ադամ :  
Ձօղն Հայոց Եւան ծրծեց քաղցրահամ :  
... Այս մեր սարերու ձերուկ արձագանք  
Աստուծոյ ձայնին տըւին պատասխանք :

Այդ «բնագաւառ»ին մէջ է որ կը կանգնի Արարատը՝ վեհագոյնը երկրագնաթիս բոլոր լեռներուն :

Ո՛հ կենսաբուս, ո՛հ սիրունակ, ինձ Մասիս,  
Ալեւորեալդ յարժաթճիւսակ բերեղեայ,  
Որ յաւերժիք յիշատակօքդ նստիս,  
Զլերինս համայն գրելով մանկունս սուօրեայ,  
Ըպտասաւոր՝ գտերեւաշարժն Ոլիմպոս,  
Գարշապարիդ քծնող թառցիկ Պարնասոս,  
Ուր երկրածինք դից կառուցին օթարան,  
Ի քեզ Աստուածն հանուրց ըզնախըն կայան :

Արարատին ուղղուած այս գերագոյն ներբողը, որ հելլեն լեռներուն իմացական անբաղդատելի գեղեցկութիւնն ըմբռնող ազատ մտքերուն տեսակ մը ամբարշտութիւն պիտի թուի, Ալիշանի համար ամենապարզ, անվիճելի ճշմարտութեան մը արտայտութիւնն է : Արարատը գերի վեր է՝ ըստ իրեն՝ Պարնասէն եւ Ոլիմպոսէն, որովհետեւ ատոնք երկրաւոր (ու յոյն) աստուածներէ բնակուեցան, մինչդեռ Արարատը յաւիտենական ու միակ Աստուծոյն «հայ» Աստուծոյն պատուանդանը եղաւ, եւ եւ խոնձարուրքը «հայ» ցեղին : Արարատի վրայ է դարձեալ որ Նոյն տապանը, այսինքն արդի բովանդակ մարդկութիւնը պահպանող բջիջը, կանգ առաւ :

Երբ գոռաց երկինքն ու զետին սարսեց,  
Ամպերն ի ծով ծովն ի յամպեր վազեց :

Այն սարին ծայրէն հոյ մտաւ ի տապան,  
Ջրագունդ երկրիս շուրջն եկաւ մանուսան,  
Չաղու ազաւնին զրկեյ աւետիս :

Երկիրս էր դտտարի անապատ ասեղ,  
Լուկ ի Հայաստան կայր մարդկութեան սեղ : (1)

Հայ ազգը ամենէն հին, ամենէն քաջ, ամենէն ազնիւ ազգն է : Հայկը որ «փառք որդւոցըն տուաւ՝ ւ ազատութիւն աշխարհի», Արամը, Տիգրանը որ «հսկայից յաղթեցին», «լեռնանրման կտրիճներն ի ձորն Հայոց թափեցին», անպարտելի թագաւորներ են եղած, որ աշխարհ դողացուցած են, ինչպէս եւ Տրդատը, «մեծն հսկայից եւ թագաւորաց» : Արգար Քրիստոսին հետ թղթակցած եւ անոր հաւասայող առաջին թագաւորը եղած է, եւն, եւն : Հայ ազգը գերազդուութեանց է մասնուած Աստուծոյ հրամանով, որովհետեւ մեղանչեց Աստուծոյ, իր նախկին արբութիւնը չպահեց. բայց օր մը պիտի գայ անպատճառ ուր այդ գերազդութիւնները վերջ պիտի գաննեն, եւ Հայութիւնը նորէն պիտի վերակենդանացնէ հին Եդեմը : Այս ամենուն վերեւ յաւիտենական Աստուածը կը ծածանի, ալեւոր եւ ահաւոր, բայց եւ կաթոգին Հայրը, երկինքի կապոյտ ալքերուն մէջ իր ոսկիգանուն վրայ բազմած, գորովով ու ցաւով լեցուն աշուրները Հայաստանի վրայ յառած :

Իսկ հայրն հանուրց անժամանակ քաղցր Աստուած  
Ակնարկեալ հաշտ յօնօք յԱզատուն Մասեաց...

Եւ Բնութիւնն իր բոլոր պերճութիւններովն ու հրապոյրներովը, ուրիշ նպատակ չունի բայց եթէ Աստուած փառարանել կամ Հայութեան ցաւերը ողբալ. արեւը Արարչին մեծութիւնը կ'երգէ, եւ լուսինը Հայոց գերեզմաններուն վրայ կուլայ :

Եւ այս բոլոր համապատկերը, որ տեսակ մը Յակոբի սանդուղ կը ներկայացնէր՝ Աստուծմէ սկսելով մինչեւ Հայաստան իջնող, իր անթիւ աստիճաններուն վրայ կրկնով վար կկող ճերմակ հրեշտակներ եւ վեր ալացող կարմիրնահատակներ (ամենքն ալ Հայ), Ալիշանի համար քնածին նկար մը, պայմանագրական տեսիլք մը, արուեստի խաղ մը չէր, այլ իրականութիւն մը, — որովհետեւ ոչ ոք «անկեղծ» եղած է ինչպէս «Յուշիկներ»ու երգիչը : Իր ազամանդէ երազին մէջ փակուած այդ մաքուր ու մանկական հոգին ժժ դարու ըմբոստ մրբիկին մէջէն անցած է, առանց իր լուսեղէն պատմուճանին վրայ ամենափոքր ցայտք մը ընդու-

(1) «Հայրունի» :

նելու, երկվայրկեան մը չէ տարակուսած իր հաւատքներուն ճշմարտութեանը մասին, խորապէս համոզուած որ երկրաւոր ուղին ուրիշց կը քալէր կ'անցնէր, զինքը կ'առաջնորդէր դէպ ի վերին եղեմը, ուր Հայրը թեւաբաց կը սպասէր իրեն: Երեք տարիի չափ առաջ, էտկար Շահին զինքը կը տեսնէր վանքին մէջ, օրհասական պատանիի մը մնարին մօտ, զուարթ ժպտով մը դէմքը շողարձակ, մահամերձին պաղ ճակատը շոյել գորովագին. «Երանի՛ քեզի, ըսելով անոր, հիմա գու՛ն հըրեչաակ մը պիտի ըլլաս եւ երկնքին մէջ լուսեղէն աթոռի մը վրայ պիտի բազմիս. քու հիմա արձակած ամէն մէկ հատաչիղ տեղ մէկ մէկ վարդ պիտի բուսնի քեզի համար Արքայութեան մէջ...»

Մարդ մը որ այսպէս կը զգար, այսպէս կը մտածէր, այսպէս կը տեսնէր, այսպէս կ'ապրէր, չէր կրնար բնականաբար մանրադէտով աշխատելու համակերպել. ամէն ինչ որ կը հաւատար, իրեն համար գերագոյն ստուգութիւնն էր. այսպիսի մտաւոր ու հոգեկան տըրամադրութեան մըմ էջ յղացուած գործեր «գիտական» հանգամանք չէին կրնար ունենալ անշուշտ: Բայց ոչ ոք պիտի մտաբերէ մեղադրել ատի Ալիշանին. անձնիւր գործիչ պէտք է գատել իր ուրոյն արժանիքին համեմատ իր մասնաւոր գործին մէջ: Ալիշան հոյակապօրէն կատարած է այն գործը զոր ուզած է կատարել, եւ որ, շարունակելով Մորենացոյն եւ Չամչեանին գործը, իրեն զլիաւոր նպատակ ունէր հայ ժողովրդին ներշնչել կազդուրիչ ու աչնուացողիչ հպարտութիւնը մեծ ու փառաւոր անցեալ մը ունեցած ըլլալու: «Միսուան»ը «Սիսական»ը, «Երիթի»ը, «Արարատ»ը մանրակրկիտ եւ ուղղակի քննութեան արդիւնք չեն. Ալիշան զանոնք յօրինած է գործածելով աչն բարձր տեղեկութիւնները, նկարագրութիւնները, տօքիւմանները զոր գտած է հայ եւ օտար հեղինակներու մէջ կամ զոր Հայաստանէն իրեն զրկած են առաւել կամ նուազ ճշգրտագէտ թղթակիցներ, առանց կարենալու առոնց հարազատութիւնը ստուգել, քանի որ երբեք ոտք չէր կոխած Հայաստան եւ թղթերու մէջէն կը ճանչնար երկիրը զոր կը նկարագրէր Պատմական ամենէն կնճռոտ ու մութ հարցերը բանաստեղծական ենթադրութիւններով լուծած է յաճախ, երբ աւանդական մեկնութիւն մը պակաս է: «Հին Հաւատք Հայոց»ին մէջ, ուր քրիստոնէութիւնէն առաջ Հայոց կրօնքը

ուղած է ուսումնասիրել, իր հիշքը կը ձգար, ոչ թէ զարերու մթութեան մէջէն ճշմարտութիւնը զանազանելու, այլ ապացուցանելու թէ հայկազեան թագաւորներու օրով Հայերը միաստուածեան էին(!), թէ կապալաշտութիւնը օտարներու ձեռքով ժամանակաւորապէս Հայաստան մտած երեւոյթ մըն էր եւ քրիստոնէութեան առջեւ ամենայն դիւրութեամբ տեղի տուաւ. զգացումը կը տիրապետէ հոն. Ալիշան առիթ չի փախցնէր այդ «չաստուածներ»ու հասցէին անախորժ քաներ ըսելու, Աստուածածնին քով Անահիտին նսեմութիւնը ցոյց կուտայ, եւ Յիսուսի դէմքին առջեւ վահագնին նուազումը, (թէպէտ եւ իր հակահեթանոսական ամբողջ ատելութիւնը զինքը չ'արգիլէր մերթ խանգաղատանքի նշոյլ մը երեւան բերելէ այդ բոլոր մեծած աստուածութիւններուն համար որոնք իրեն նորէն մինչեւ աստիճան մը «սիրելի» են Բանի որ հայ են): «Հայրուսակ»ին մէջ իսկ, որ բառարան մըն է հայկական բոյսերու անուններու, Ալիշան միջոց կը գտնէ իր զգայնութիւնն ամէն վայրկեան ի տես գնելու. ծաղիկներու միջեւ աչնութեան ու պատուոյ աստիճանաւորում մը կը հաստատէ՝ իր հայ-քրիստոնեայի գառու մին համեմատ, ինչպէս՝ օրինակի համար՝ վարդի եւ շուշանի համբաւաւոր բազդատութիւնը. Շուշան ծաղիկը գրեթէ անկարօտ է ծանօթութեան, անողին եւ լսողին միաքը կը յափշտակէ, եւ որչափ ալ նիւթական բոյս մ'ըլլայ ուրիշներու նման, բարդական կամ աննիւթական գաղափար մ'ալ կ'աղչէ: Իհնու ի վեր վարդի հետ ծաղկան գլխաւորութիւնը ժառանգած է, իրեւ թաղաւոր եւ թաղուհի. բայց ո՞ր այս ո՞րն այն՝ զի ըստ այլ եւ այլ լեզուաչ՝ ամենք զվարդ թագաւոր գրեն եւ զշուշան թագուհի, այլք ընդհակառակն, մինչ առաջինն յարմարագոյն գայ: — Իսկ ո՞րն աւելի գերազանց: Հասարակաց վարկն վարդի սուտն է այս աւանդութիւնը, սակայն երբ յիշուի որ հինքն Ատողկան կը մատուցանէին գայն՝ աւախաց գիցուէ՞ր, իր յարգն ու վարկը կը կորսնցնէ քրիստոնեայ մտաց առջեւ, որ անոր փոխարէն զշուշանն համարեն օրինակ ողջախոհութեան եւ կուսութեան:

Նոյն իսկ երբեք Հայաստան գաղտն չըլլալը, — որ տարօրինակ կը թուի Հայաստանը երգելով ու նկարագրելով իր ամբողջ կեանքն անցընող մարդու մը կողմէն եւ զոր «Նոր դար» անիրաւաբար ի վեր կը հանէր իրեւ Ալիշանի հայրենասիրութեան անկեղծութեան մասին տարակոյս տուող իրողութիւն մը, — շատ լուսաւոր կերպով կը բացատրուի երբ մարդ թափանցէ Ալիշանի այդ մասնաւոր հոգեբանութեանը. «Ալիշան, — կ'ըսէր զք մը ինծի՝ ծանօթ բանաստեղծ մը որ իր աշակերան

է եղած, հիւանդ պիտի ըլլար եթէ այսօրուան ողբալի, քայքայուած, մոխրապատ Հայաստանը աչքովը տեսնէր: ան իր մտքին մէջ միշտ կենդանի ու կանգուն կը նշմարէ հին, շքեղ, ազատ Հայաստանը, եւ այդ տեսիլքը չէ ուզած երբեք քանդել իրականութեան բիրտ բաղխումովը:»

Ալիշանի այդ բոլոր պատմական, բանասիրական, տեղագրական աշխատութիւնները պէտք է նկատել ուրեմն բանաստեղծ-հաւաքչի, հայրենասէր-ընդհանրացող զործեր, — եւ իբրեւ այդ՝ զմայլելի զործեր են անոնք:

Քննադատական ոգիի պակասը անոնց մէջ կը փոխարինուի բազմաթիւ ուրիշ յատկութիւններով որ զանոնք տարօրինապէս կենդանի եւ շահեկան կը կացուցանեն, — յատկութիւններ որոնց գլխաւորներն են ընդարձակ ու բեղուն հմտութիւն, անխոնջ խուզարկութեան ձգտում, եւ արտայայտութեան արտասովոր զօրութիւն: Մնամէջ հետադարձութեամբ մը թարգմանուող ուղուցիկ դրայնութիւն մը չէ որ կը լեցնէ այդ զործերը: համբերասար ու կաթողին տաժանքով, հաղար ձեռագրի, գրքի, ստուգարանի, քարի, փայտի, շէնքի, աւերակի, արձանի, պատկերի վրայէն հաւաքուած «իրողութիւններ» ու շեղջակոյտ մըն են անոնք, որ կը ներդաշնակուի. կ'ոգեւորուի, սիրուն կենսախայտ ամբողջութիւն մը կը կազմէ՝ հաւաքողին լայն ու տաք շունչին տակ: Այս «հայարձան»ին մէջ զոր կանգնած է, ամէն բան կայ, ամէն ինչ որ Հայերուն անցեալ կամ ներկայ, քաղաքական կամ կրօնական, գրական կամ ուսումնական կեանքին կը վերաբերի «Արարատ»ը, «Շիրակ»ը, «Սիսուան»ը, «Սիսական»ը կը պարունակեն անհամար ծանօթութիւններ Հայաստանի գլխաւոր նահանգներուն աշխարհագրութեանը, պատմութեանը, բարքերուն, բուսականութեանը, ախպարներուն, սովորութիւններուն վրայ: «Աշխարհագրութիւն Հայաստանի»ն, «Երկրագիտութիւն հայկական»ը ամենէն խնամոտ աշխատութիւններէն են այդ ճիւղին մէջ զոր Հայ մը մինչեւ այսօր արտագրած ըլլայ: «Հայքուսակ»ը կը բովանդակէ հայկական բոյսերու անուններու ընդարձակ ցուցակ մը, բազմաթիւ ծանօթութիւններով: «Հայ-Վենետ»ը կ'ամփոփէ պատմութիւնը այն յարաբերութիւններուն զոր կիլիկեան Հայութիւնը ունեցաւ Վենետիկեան հանրապետութեան հետ

եւ այն նշանաւոր անհատներուն զոր արտագրեց Վենետիկ հաստատուած հայ դաղթակտնութիւնը: «Հին Հաւատք Հայոց»ը հաւաքումն է այն բոլոր տեղեկութիւններուն զոր հայ եւ օտար պատմադիրներու մէջ կարելի է գտնել Հայոց հին հեթանոսական կրօնքին վրայ: «Շնորհալի եւ պարագայ իւր»ը կը ներկայացնէ Հոռովկայի սոխակին գմայլելի կեանքը՝ իր ամբողջ շրջանին համապատկերովը: «Արշալոյս քրիստոնէութեան ի Հայս»ը կը պարունակէ այն բոլոր ծանօթութիւնները զոր ազգային եւ օտար աղբիւրները կուտան Քրիստոնէութեան Հայոց մէջ մուտքի առաջին շրջանին վրայ, եւ զեռ իրմէ կը մնան, անտիպ, տասնէն աւելի հատորներ, որոնք նոյն դործը կը շարունակեն, («Պատմութիւն հայ վանօրէից յիտալիա եւ յԵւրոպա», «Հայաստան նախ քան զՀայաստան մինչեւ ցՄԵԾն Տիգրան»), «Յիշատակարանք հայ գրչապետաց», «Կոնդակք Ս. Քահանայապետաց առ հայս եւ Կաթողիկոսաց առ Քահանայապետաց», «Մնացորդք տեղագրութեանց Հայաստանի», «Հայկականք», 8 հատոր, «Հաւաքումն եւ աղբերք հայ պատմութեան եւ մատենագրութեան», եւն): Ասոնց հետ, Ալիշան ատեն գտած է ծանօթագրութիւններով հրատարակելու նախնեաց ձեռագիր գործերէն՝ «Արուստիկ Պատմութիւն եւ կեղեցեաց եւ վանօրէից Եղիպոսի»ն, «Գիրք վաստակոց»ը, Խոսրով Անձեւացոյ «Մեկնութիւն պատարագի»ն, Կիրակոսի «Պատմութիւն»ը, «Սոփերք Հայկականք»ը (22 հատոր), որոնք կը պարունակեն նախնեացմէ մնացած մանր մունր զործեր, Վարդան վարդապետի «Հաւաքումն պատմութեան»ը, Կամենիցի «Լեհաստանի եւ Խուսանիոյ Հայոց տարեկիրք»ը, «Նշմարք եւ նշխարք Հայաստանին» ուր Հայաստանի ամենէն գեղեցիկ բնանկարներուն, շէնքերուն պատկերներն ամփոփած է՝ ծանօթագրութիւններով, ու վերջապէս՝ Հայոց անցեալ ու ներկայ կեանքը Եւրոպացոց ծանօթացնելու համար հրատարակած է Հայոց օսակական երգերու հաւաքածու մը՝ անգլիերէն թարգմանութեամբ, երկու Ֆրանսերէն բանաստեղծութիւններ՝ այնքան վառվռուն որքան հմտալից՝ Հայոց պատմութեան վրայ, եւ «Սիսուական»ին Ֆրանսերէն թարգմանութիւնը:

Ոչ մէկ հայ Հայկէն մինչեւ այսօր, չէ ցոյց տուած այդքան վիթխարի աշխատասիրութիւն մը՝ այդքան հարուստ ու փայլուն արդիւնքով մը պատկուած: Քսան հոգիի գործ կատարած է Ալիշան իր կեանքին ընթացքին մէջ, ամբողջ մատենադարան մը, ամբողջ աշխարհ մը թողած է մեզի: Եւ հայ պատանիներու համար որ նոր կը սկսին ուսանիլ, զարգանալ ու կազմուիլ, եւ որոնք պէտք ունին իրենց ազգին ու հայրենիքին վրայ իրենց խօսող առաջ ու ազնիւ ճայնի մը, չկայ աւելի կազգութիւն, աւելի հրաճանգիչ ու հրապուրիչ մատենադարան քան այն զոր Ալիշան կանգնած է: Մասնագէտները պիտի վերսկսին այդ աշխատութիւններէն իւրաքանչիւրը, պիտի գտանն անոնց մէջ ճշգրիտը սխալէն, պիտի հասնին աւելի կուտ ու ճիշդ հեռանութիւններու, — բայց Ալիշանի այդ գործը միշտ պիտի պահէ իր օգտակարութիւնը՝ իբրեւ նիւթեղէններու ամենէն փարթամ հաւաքածուն զոր կարելի է գտնել, եւ իր անթառամ կենդանութիւնը — երբ մահուանդ անոր բոլոր գրաքարով խմբագրուած մասերը աշխարհաբար թարմանուին — իբրեւ երգ մը բիւրեւանգ ի պատիւ հայ ցեղին, իբրեւ անհուն մուսէտն մը հայ պատմութեան:

Ամէնէն աղւոր հնչիւններէն մին՝ այդ երգին մէջ, ամենէն շքեղ զարդը այդ մուսէտնին, այն պաշտելի դիւքն է որ կը կոչուի «Յուշիկք հայրենեաց Հայոց»: Տեսակ մը անբիծ, խանդակաթ ու դիւցազնական «Հաղար ու մէկ գիշեր», ուր հեղինակը, յիշատակներով բեռնաւոր ծերունիի մը զիմակն դիւցած, հայրենի աւերը կրակարանին անկիւնը կծկտած, ճմնուտան գիշերներուն երկայն մթութիւնը կը լուսաւորէ՝ իր Հայկակ թռուիկին, այսինքն իր առջեւ ծնրագիր բոլոր հայ պատանութեան, պատմելով հայկական պատմութեան ամենէն փառաւոր գրուածները, հայ մտքին ամէն անսակ ճիգերը՝ ամենէն վեհազանծներէն մինչեւ ամենէն անչուքներն ու մոռցուածները, հոն ետեւէ ետեւ կը տողանցին շատ մը մեծ հայ զէմքեր, իւրաքանչիւրն իր ուրայն հրապոյրովը, — «Կարմիր» Վարդանը, եւ Սահակ Պարթևը, Զապէլ թագուծին եւ Թէոփորոս Սալհունի նահատակը, Աշոտ Ա. ը եւ Ստեփանոս Սիւնեցին, Վարդանի դուստր Ծուշանիկը եւ Վահան Գողթնացին, Պոլիբոտոսն եւ Նէարթոսը, Սոփեստէս սարկաւազն ու Յովհան Երզնկացին, Լեւոն «վերջին»ը եւ Խուլ Խաչիկը, յետոյ,

Արգար գպիրը, հայկական սպարաութեան առաջին հիմնադիրներէն մին, հայացեղ բիւզանդական կայսր Վարդան Բ. ը, հայ ժողովրդական բանաստեղծները, Հայոց հին տօնարը, Հայաստանի բնախօսութիւնը, հայկական տօնները՝ Նուասարգը, Մննդեան տօնը, Ոսկեքերանի բնակութիւնն ի Հայաստան, Քսենոփոնի անցքը Հայաստանէն, եւն, եւն, եւ այս բոլոր զէմքերը, զէպքերը, յիշատակները կ'ողեւորուին, կը յառնեն անցեալին փոշիէն, կը վերապարին՝ տարօրինապէս ներուժ կեանքով մը, շնորհիւ այն թրթուուն շունչին զոր պատմողը անոնց վրայ կը փչէ, պատմողը որ քաղցր պապիկի միամիտ շաղփաղփանքներէ զիւցազներգակ բանաստեղծի հոյակապ շեշտերու կ'անցնի փոխ առ փոխ, միշտ անկեղծ, միշտ յուզուած, միշտ կենդանի, միշտ սիրուն, ու միշտ սողորուած ազնիւ, արի, գողտրիկ, մաքուր իմաստասիրութեամբ մը, որուն մէջ տիրապետող կրօնական զգացումը ոչինչ ունի թուլացուցիչ եւ ջլատիչ, այլ ընդհակառակն զրդիչ մը կը դառնայ աշխատասիրութեան, քաջութեան, առողջ հայրենասիրութեան:

«Արարչագործ մատանց բարձրագոյն կերուածք, շինարարաստեան կատարքն կամ զագաթն Եմուտնի, այլ ուսերուզ վերեւը կանգնած իմաստից ասճար՝ գլուխդ, բարձր եւ բարակ բանուած: Չկայ ծաղիկ արժանաւոր այդոր պսակ ըլլալու, ոչ սկիւն եւ արձաթ որ հողէ կ'ելնեն, ոչ ծիրանի ծովերէ խօսած բուստ եւ մարգարիտք: Ո՛հ, գեղեցիկ են մայիսի սուսուտուն ցողակաթ վարդակաթմիր փնջիկքն այլ՝ դալար ճակտի մը բոլորած սակայն շատ աւելի պայծառ է ամթխածութեամբ խայծեալ երեսն, եւ աւելի ազնիւ՝ անոր վրայ շտրուած աշխատութեան կայլակներն:

«... Լալով կու ծնանիմք, խաղալով կու մեծնամք, աշխատութեամբ պէտք է մարդ ըլլամք. մէկ ձեռքով մեկի մէկ ձեռքով մեր նմանեաց օղննք. սիրով կենակցինք, պատուով ապրինք, լուսով ձերանանք, գոհութեամբ մեռնինք:

«... Ահա ազգք եւ օղինք, մեղի մօտ ե հեռի, Հայկակ, ամենքն զքաղած են իրենց հայրենի ագարակը շէնցնելու, եւ անգրանիկն ազգայ՝ մեր ազգն՝ կրնամք ըլլալ յետամնաց:

«... Առ բուռն քու, ս'վ Հայկակի քու վիճակիդ յարմար աշխատութեան գործիդ, վերցուր յերկինք, օրհնել տուր եւ աշխատէ՛ աշխատէ՛ յերկրի, միտքդ յերկինս, սիրտդ հայրենեացդ վրայ:

«... Ճշմարիտ հայրենասիրութիւնն չէ ասուզ կամ փայլակ մը յանկարծ երեւցող եւ անցնող. ոչ հուր մուրի եւ թափառիկ, ե ոչ կայծակն այրող լափող, այլ հասնաբար շերմութիւն մը, յատակ լոյսով, անտողբու խղճով...

«Ո՛վ անձնուրաց սգի, բարեխնդիր հայրենասիրութիւն, դու պատրաստէ, վառէ օրբէ զսիրտ Հայկակայ: Քեզմով վառուած սիրտն՝ անխաղթ եւ անմուխ լըս կ'արձակէ. ե եթէ խարկի մրկի սիրտն եւ անցնի երկրաւոր մասամբն, երկնուեակ մասն՝ մնայ ի վերայ հայրենեաց, որպէս հատ մշկի եւ կնդրի:»

Ալիշանի գործին ամենէն թանկագին , ամենէն բարձր մասը սակայն՝ գեղեցկագիտական տեսակէտով , իր «Նուագներ»ն են . հոգ ալլեսս իր բուն տարրին մէջ է Ալիշան , զուտ բանաստեղծութեան մէջ : Միշտ միեւնոյն նիւթերն են որ զինքը կը ներշնչեն հոտ ալ , — կրօնք եւ հայրենիք , — բայց թուականները , պատմական կամ կրօնական առեղծուածները , բանասիրական կնճիռները ալլ եւս չեն ծանրաբաններ իր թ ուիչը . հոտ ալլեսս ակնոց չու նի , գրքերու , ձեռագրերու փոշին թօթափած է , աշխատանոցի մթնոլորտէն զուրս է ելած՝ ու թեւերն ալլեսս ազատ ամէն աւելորդ բեռէ՝ կը թ ուիչ իր երեւակայութեանը երկնքին մէջ եւ կ'երգէ : Իր երգը ամենէն վեհը , ամենէն ճոխը , ամենէն հզօրն է զոր հայ քնարը արւ ձակած ըլլայ երբեք , եւ ամենէն բազմազանը : Ծնորհալին ու Նարեկացին , Խորենացին ու Թլկուրանցին , Եղիշէն ու Պլուզը իրենց ձայնները միացուցած են անոր մէջ , եղբայրակցելով Բեթրարքայի , Լամարթինի , Միլտոնի , Հիւկոյի , Պայրենի մեծ տաւիղներէն ինկած մէկ քանի լայն հնչիւններու հետ , խառնուած այն խորունկ , սիրուն , տարօրինապէս կրակոտ , միամիտ ու միանգամայն զիւրազնական , քրնքուչ ու միանգամայն վսեմ ձայնին որ Ալիշանի հոգին ինքնուրոյն բլլաւ : Այդ երգը տարապայմանօրէն անհասարէ . «Մանկունի»ն դպրոցականի շարադրութեանց հաւաքածոյի մը տպաւորութիւնը կը թողու , եւ «Տէրունի»ին մէջ հազիւ կարելի է գանել երեք չորս քերթուած , ինչպէս «Աստուածային մեղամարտութիւն»ը , «Ս Յիսուս պատանի կրելով զգործիս չարչարանաց»ը , եւն , որոնք անձնական գոյն մը ունենան եւ այն մեծ շունչը որ Ալիշանի գեղեցկագոյն էջերը կ'ուռուցնէ . բայց «չայրունի»ին , «Բնունի»ին եւ մանաւանդ «Տխրունի»ին մէջ , — ուր քրիստոնէական իմաստասիրութեամբ ներշնչուած համամարդկային լայն բանաստեղծութեան մը շեշտերը կը հնչեն հոյակապօրէն , — կը գրտնենք բազմաթիւ քերթուածներ որոնք շատ մեծ ու շատ ինքնատիպ բանաստեղծի մը գործն են : Բոլորովին տարբեր Բագրատունիէն եւ Հիւրմիւզէն , որոնք յոյն-լատին գրականութեան աչակերտներ էին եւ հեթանոսական գեղեցկագիտութեամբ տոգորուած , Ալիշան քրիստոնեայ է մինչեւ ոսկորներուն

ծուծը ու եւրոպական ոտմանթիկ բանաստեղծութեան ազդեցութիւնն է կրած : Արեւմուտքի գրականութիւնները շատ մօտէն ճանչցած եւ իւրացուցած այդ բանաստեղծը խորապէս արեւելցի մնացած է սակայն , խորապէս «չայ» մանաւանդ . անժուժկալ , անսանձ , անհամեմատական է , եւ կը պաշտէ հարուստ ու մեծաշքեղ բաներու կուսակուծը , ալիքներու պէս շառաչաձայն վրայէ վրայ թաւալող սողերը , շողշողուն բայց խառնափնդոր իրարու վրայ գիզուող պատկերներու շեղջեղջութիւնը : Արին այդածին վարագրիտակ ծիրանագորդ , Շաղ մարգրոպէն ցօղելով շուշանապարդ , Յակնաղիս շափիղայ , Լոյս կարկառէր Արեւայ , Ճողճոյր ճոխածեմ արեգակն սակեմջիկ , Շուրջ առեալ շողայր շամանդազն օդապարիկ :  
 Կը սիրէ նմանաձայնութիւնը ,  
 Հայկեան փանդանց որտընդոտ գուրնչին բարբառ մարտագու ,  
 Կը սիրէ տառակրկնութիւնը ,  
 Եւ հազ ընդ հազ հառաչէր հեղեղըն հեռաւոր . —  
 Կը սիրէ մինչեւ իսկ բառախաղերը ,  
 Որ հանց բերու բոյս կուտան  
 Ուսկից հապար կոյս բուսան .  
 Բայց եւ ունի էջեր Լամարթինեան պարզութեամբ եւ դաշնակաւորութեամբ — ինչպէս «Բնունի»ին սիրուն , փափուկ , թաւշնի քերթուածները կամ այն զմայլելի «Խորհրդա» ծուժիւնք ընդ եղևնեալ»ը , գրուած բիւրեղէ ոճով մը , զոր ճաթսպրիան պիտի յօժարակամ ստորագրէր : Լեղուն , գրաբար քերթուածներուն մէջ , Հիւրմիւզին ողորկ ու միշտ վայելուչ ու դաշն հայերէնը չէ , խիզախ , ըմբօսա . անհանդարտ , փրփրոտ հայերէն մըն է , ուր Նարեկացիին ազդեցութիւնը կը զգացուի : «Նահապետի երգեր»ուն , ինչպէս եւ «Մալթունի»ին մէկ քանի ուսմկերէն քերթուածներուն մէջ միջնադարեան հայ աշուղներուն լեզուն է որ գործածած է Ալիշան , եւ այդ երգերը զինքը կը կացուցանեն մեծագոյնը հայ աշուղներուն՝ Նահապետ Քուչակին եւ Սայաթ-Նովային հետ : Այդ բանաստեղծութեանց ամբողջութիւնը , հակառակ անոնց մէջ նկատուող թերութեանց որոնք բազմաթիւ են — ձաշակի պակաս՝ երբեմն , համեմատութեան պակաս՝ յաճախ , մերթ ծայրայիղ ճոռմուժիւն , ուստէպ՝ տղայարանութիւնը վսեմին , Լարալիսը Պայրենին զուգակցորդ , — կը ներկայանայ իրբեւ քերթողական ամենէն հզօր ճիզը որ երեւցած ըլլայ Հայոց մէջ : Ոչ մէկ հայ բա-

նաստեղծ այնքան եռանդ , այնքան ուժգին թոխչեալ եւ այդպիսի այլազան , պատկերաչող , գունադեղ ու փարթամ ձեւ ունեցած է որքան Ալիշան : Հոմերական շողիւններ , Աստուածաչնչական փայլակներ , Հիւկոյական հրաբխութիւններ կան անոր մէջ , ու ատոնց հետ մինչեւ իսկ անկապաշտ բանաստեղծութեան տենդոտ ցոյթեր , արաբ քերթութեան արշաւասոյր սլացքներու եւ հայկական շարականի գողտր մեղեգիներու խառնուած : Փոխանակ հայ ազգին պատկանելու եւ վանքի կեանքին մէջ իր միտքը կաղապարելու , եթէ Ալիշան եւրոպական մեծ ազգի մը ծոցը ծնած եւ ազատ կեանքի մը մէջ զարգացուցած ըլլար իր մտաւորական կարողութիւնները , եթէ մանաւանդ՝ տասը մարդու գործ կատարելու , քսան սեռ մշակելու տեղ ինքզինքը նուիրած ըլլար միմիայն բանաստեղծութեան , այն հրեղէն խառնուածքը որ կը զգացուի իր գործին մէջ՝ յառաջ պիտի բերէր թերեւս Հիւկոյի կամ Պայրընի հաւասար արուեստագէտ մը : Այդպիսի խոշոր ուժի մը հանդէպ ինչպէս էր՝ անվիճելի կերպով՝ Ալիշան , աններելի պիտի ըլլար թերութիւնները միայն տեսնել , մանաւանդ որ այդ թերութիւնները կը բացատրուին միջավայրովը (ինչպէս որ փոխադարձաբար աններելի եւ անմաստ պիտի ըլլար զանոնք քողարկել եւ ապուշ ու անգիտակից ներքողով մը ներկել իր ամբողջ գործը) : Գննադատութեան գերն է գրողի մը մէջ ամէն բանէ առաջ գեղեցկութիւնը գտնել եւ ի վեր հանել՝ եթէ կայ . եւ երբ գեղեցկութիւն կայ գրողի մը մէջ , ան է որ գոյութիւն ունի , եւ ան միայն . զայն պէտք է մատնանիչ ընել ամէն բանէ առաջ . ու երբ ան ունի արտասովոր փայլ մը , կը մոռցնէ բոլոր թերութիւնները : Բրեվօ արբան երեք հարիւր վէպ գրած է բացարձակ միջակութեամբ մը , — բայց գրած է եւ «Մանօն Լէսքօն» , որ ամենէն զմայլելի գործերէն մէկն է զոր մարդկութիւնն արտադրած ըլլայ , ու արբայ Բրեվօյին վրայ խօսած ատեն՝ մարդ «Մանօն Լէսքօն» կը յիշէ միայն եւ երեք հարիւր վէպերու խօսքը չ'ընի : Ալիշան գրած է «Հարսեբոյ» , «Հուսկ բան առ ոգին նուարաց»ը , «Ճայգախոհք ի տապան մանկան Մոնագին»ը , «Ի Սոմիացին»ը , «Յիշատակ մահու եւ մեռելոց»ը , «Բնունի»ին «Խոհունի»ին , «Խորհրդածութիւնք ընդ եղեւնեաւ»ին ինչպէս եւ «Յուշիկներ»ուն եւ

«Նահապետի երգեր»ուն . Բէկ քանի զմայլելի հատուածները որոնք հրաշալիքներ են մաքուր ու բարձր ներշնչման եւ հոգեթոխչեալ ոճի . եւ ատոնք կը բաւեն որպէս զի զինքը համարինք Հայոց մեծագոյն բանաստեղծը , որովհետեւ որքան ալ Աբովեան , Պէշքթաշեան , Դուրեան կը գերազանցեն Ալիշանը գրական այս կամ այն սեռին մէջ ուր իրենք մասնաւոր ուժ մը ցոյց կուտան , Ալիշան զանոնք ամենքն ալ կը գերազանցէ իր տաղանդին անհուն բազմազանութեամբը , լեզուին հարստութեամբն ու ճապկութեամբը , սաղաչափութեան անվերջ պէսպիսութեամբը :

Եւ կան մէկ քանի էջեր Ալիշանի քերթուածներուն մէջ որոնց համարժէքը ժամանակակից ո եւ է հայ բանաստեղծի մէջ չենք գտնել , էջեր գերագոյն բանաստեղծութեան ուր մասնօճեմ եւ ձեւը , հաւասարապէս ազնիւ , բարձր ու հզօր , լսելի կ'ընեն , շեշտ մը որ երբայցի մարգարէները կամ բոմանթիկ մեծագոյն բանաստեղծները կը յիշեցնէ .

Ա՛հ , ժամ ե , ժամ՝ յորում փառք , շեռոխք , սուրբ քաղցի

Հակոբցուներ , գունձն ոչ քարեն .  
 Յորժամ նստայ սիրս իբր յերկիր ս նջրդի՝  
 Չուարքադեմ ինչ ոչ տեսնեն .  
 Ժամ է՝ յոր քիւրք զարմանալիաց աշխարհի  
 Թըշի սուսար մասեան հեռակարկաս ,  
 Եւ բնութիւն , ծո՛ւ վ ըսքանչեղեաց առ երի ,  
 Ունայն իսկ եւ յոռ մագաղսք .  
 Ժամ յորժամ ոչ հեշտ գօրե շունչ ինկորքեան  
 Պարգեղ ըզկրնձիռն անկասձառ ,  
 Ոչ մըսերմիս ըսիտիական ազդե ձայն  
 Յանաշխարհիկ սիրս՝ խուչ յամառ .  
 Ժամ՝ յորժամ ոչ ինչ կըշմարի բաց յանձնե .  
 Եւ անձն իբրեւ սիրն մ՝ յարեալ  
 Ի վերայ քիւր յիշատակացն արկանե  
 Զիւր եւեր ըսուեր սիրուալ .  
 Ժամ՝ յոր հանգոյն հեշիս վանգից իրեարիս ,  
 Կամ ողբերգական աւաշոյ ,  
 Որ մանագոյժ ըսքեալք առ սիրս մեքեկիս  
 Խորագոյն մըխե զվերս ազդոյ ,  
 Յանմըխիսարե յայն յանհանգիսն այդ պահու  
 Իբրեւ յաշխարհե հեռասան  
 Ժամանեալ գայ՝ նկոսուցիչ ձայնըն մահու ,  
 Եւ խոնարհի սիրս ի սապան . . . (1)

(1) «Տիրունի» . — Յիշատակ մահու եւ մեռելոց .

Ալիշան ոչ մէկ ժամանակակից հայ գրադէ-  
տէ կամ բանաստեղծէ ազդեցութիւն չէ կրած,  
ոչ Մխիթարեան գրողներէ, ոչ ալ ուսանայ  
ու թրքահայ գրողներէն, մինչդեռ ընդհակա-  
ռակն իր ազդեցութիւնը մեծապէս զգալի է  
ԺԹ զարու հայ գրագէտներէն շատերուն վրայ:  
«Նահապետի երգեր»-ուն ցոլքը կ'երեւայ Քա-  
մառ-Քաթիկայի կարգ մը քերթուածներուն,  
ինչպէս եւ Աղայեանցի ոտանաւոր ու ար-  
ձակ բանաստեղծութեանց մէջ. Պէշիքթաշեան  
եւ Դուրեան, թէպէտ բոլորովին տարբեր խառ-  
նուածքով, «Նուալներ»-ու հնոցէն կայծեր ըն-  
դունած են իրենց հոգւոյն մէջ. եւ «Յուշիկ-  
ներ»-էն ետքն է որ Ծերենցի, Մախուրեան ու  
Բաֆֆի Հայոց հին կեանքը վերակենդանացնող  
իրենց վէպերը յղացած են ու Սրուանձտեանց  
հայ աշուղի երգերը, ժողովրդական աւանդու-  
թիւնները. հեքիաթներն ու բարքերը հաւա-  
քելու մղումն է ունեցած:

Իսկ ազգային շարժումին մէջ, Ալիշանի գոր-  
ծին ազդեցութիւնը նուազ մեծ ու անմիջական  
է եղած քան այն գոր ունեցած է Նալբանդ-  
եանի, Քամառ-Քաթիկայի, Պէշիքթաշեանի,  
Ծերենցի, Դուրեանի, Արծրունիի, Բաֆֆիի  
գործը: Եւ ասի երկու պատճառով. Նախ՝ Ալի-  
շանի գործը, վայելելով հանդերձ արեւելեակա-  
յարգանք մը բովանդակ հայ ժողովրդին մէջ՝  
շատ սակաւաթիւ Հայերու ծանօթ է եղած իր  
ամբողջութեանը մէջ. ժողովրդին ամենա-  
ստուար մեծամասնութիւնը Ալիշանէն ուրիշ  
բան չէ ճանչցած բայց «Նահապետի երգեր»-էն  
բանի մը հատուած, «Յուշիկներ»-էն քանի մը  
էջ. «Նուաղներ»-ը, «Սորճրդածութիւն ընդ եւ  
ղեւնեաւ»-ը, տեղագրական եւ աշխարհագրա-  
կան գրքերը իրեն անմասաչելի են մնացած՝  
գրաբար լեզուով — ու շատ խրթին գրաբա-  
րով մը — գրուած ըլլալուն համար. նոյն իսկ  
մեր գրագէտներէն կամ գրահմուտներէն չա-  
փաղանց փոքր մաս մը լրջօրէն ծանօթացած  
են Ալիշանի բովանդակ գործին: — Նալբանդ-  
եանի, Քամառ Քաթիկայի, Արծրունիի, Բաֆ-  
ֆիի, Պէշիքթաշեանի, Դուրեանի, Ծերենցի,  
Մամուրեանի գրուածքները շատ աւելի ըն-  
դարձակ տարածում ունեցած են հայ ժողովրդի-  
ւորներէն մէջ, որովհետեւ շարագրուած են ժո-  
ղովրդին խօսած լեզուովը: Ատկից զատ, մինչ-  
դեռ այդ բոլոր ուսանայ ու թրքահայ գրա-

գէտները ժողովրդին մէջ կ'ապրէին ու կը  
գործէին, հանրային բոլոր խնդիրներու վրայ  
իրենց կարծիքը կը յայտնէին, բարքերու կեր-  
պարանափոխութեանը համար կը կոռէին,  
օրուան դէպքերն իրենց գրչին կամ քնարին  
նիւթ կ'առնէին, մինչդեռ Նալբանդեան, Նալ-  
բանդեան, Ռականեան, Սվաճեան, Արծրունի՝ հա-  
ղարաւոր ընթերցողներու հետ ամենօրեայ հա-  
ղորդակցութեան մէջ՝ անոնց հոգիին մէջ ա-  
զատական գաղափարներու հոսանքը կը թա-  
փէին, մինչդեռ Պէշիքթաշեան հայկական  
թատրոնը կը հիմնէր, կը թափան հաստատու-  
թեանց զարգացմանը կ'աշխատէր, կ'աթուղի-  
ներու եւ լուսաւորչականներու միջեւ եղբայ-  
րութիւն կը քարոզէր, մինչդեռ Ծերենցի, Մա-  
մուրեան, Բաֆֆի հայութեան ապագային կա-  
ռուցումը կը պատրաստէին, Ալիշան իր վա-  
նականի կեանքին ու գործին մէջ փակուած,  
հետուամտիւնէն, որուան խնդիրներէն անջատ,  
ու իր աղւոր ու անհուն երազին, իր անժա-  
մանակ ու անձիր սիրոյն մէջ թաղուած, կը  
շատանար իր երգողի, հաւաքողի դերը կատա-  
րելով. եւ իր ամբողջ ճիւղ կ'ուղղէր աւելի  
հայ ժողովրդին անցեալը վերակենդանացնելու  
քան ներկան քննելու կամ ապագան հան-  
դերձելու. Հայոց ներկային վրայ Ալիշանի  
գործին մէջ ուրիշ բան չենք գտներ բայց եթէ  
այն մէկ քանի ողբերը որ «Նահապետի եր-  
գեր»-ուն մէջ կը հնչեն (Ողբամ զքեզ Հայոց աշ-  
խարհ, Լուսնակն գերեզմանաց Հայոց) ողբեր  
որոնք սքանչելի են իրենց շեշտին անկեղ-  
ծութեամբը եւ արտայայտութեան քնքշու-  
թեամբը, բայց որոնք որոշ ճգտում մը չեն  
պարունակեր՝ աւերակներն իրականապէս  
վերակենդանացնելու ճամբան ցոյց տուող.  
այն շատ հազուադիւր էջերը ուր Ալիշան  
գործունէութեան ուղի մը ուղած է մասնա-  
նիշ ընել հայ երիտասարդութեան, ուրիշ բան  
չեն բովանդակեր բայց եթէ յորդոր մը «մտա-  
ւորական զարացումն» ընդարձակելու. Ալի-  
շան որ հին հայ քաջերուն սխրագործութիւն-  
ները երգած ատեն զիւցալնութեան, զէնքի,  
կոիւի պանծացումը կը տարփոզէ պողպատէ  
տողերով:

Չայն բարձին կարկառք կանգարայ, ձայն արձակեայ կուր-  
վիրքի, Լոնք եւ Աղուտնք ակնարկեցին առ Հայաստան,  
Չարթիք, վեհագունք, զարթիք, զարթիք իմ բոցախուր,  
Վասակն եմ սեղուհ մամուրն, փոռայ անձմ ձեզ ձայն,  
Հայոյ մանկտի, ձի կալէք ընթացէք,  
Արեամբ ժանտից զտուտերս քամեցէք:

նոյն Ալիշանը տարօրինապէս զգոյ՞ ու խոհեմ՝ կը դառնայ երբ խօսքը կ'ուղղէ արդի հայ սերունդին եւ անոր ճիղին թիրախ մը կ'ուղղէ ցոյց տալ. «Երգ հայրենի»ին մէջ, կը հրաւիրէ հայ երիտասարդութիւնը վերականգնել հին Հայութիւնը, բայց իբր միջոց ցոյց կուտայ ճանչնալ հայ անցեալը, ճանչցնել զայն օտարին, զարգացնել հայ լեզուն, հայ գրականութիւնը, ազնուացնել հայ բարքերը:

Սիրտ ի սիրտ, ձեռն ի ձեռն, եղբարք, պնդեցին,  
Առ մի նպատակ լեալ ուշ ի կուրծ.  
Շքեթունք հրաշունչք համարե՞մք միտքս ծընցին.  
Մի բարբախտն ի լա՛նջս հանուրց,  
Բացցուք հանցուք ի շիրմաց ու ի յանձուաց  
Զժառանգութիւնս հարց տնմահ պարծանաց,  
Յուցանել աղանջ զնախնիս անուանիս,  
Յո՛ն եւ օ՛ն, եղբարք եռօճիւղուն,  
Կառուցուք մեզ սիրտ հայկազուն:

Աւագ Մասիւր, «Ննահապետի երգերուն մէջ», կ'ըսէ թէ «հին փառքերը նորէն պիտի գան եթէ Հայերը

... Սիրով, հանգարտ ու խելօք  
Զանք դնեն բարւոյն ու շքնին անհօր:

«Յույրիկներ»ուն մէջ Ալիշան իր այդ տեսութիւնը աւելի որոշ կերպով արտայայտած է

«Ես չեմ վախնար բեկու թէ լայտատան մէկ որոշեալ վիճակ մը կամ նպատակ մ'ունեցեր է յառաջ քան այլ աղբիւր, եւ որ աւելի հարկաւոր է դիտարկու, դեռ այդ վիճակն ընթացած է: Գաղտնիք մը չէ բաժնս եւ ոչ խորհրդաւոր բան մը, այլ հնացեալ հաւանութիւն մը հայ մտաց, թէ դեռ գործ մը ունի կատարելու երկրիս վրայ, բարեբաւտիկ գործ մը: Այժմէն բան ընթացած չէ իրեն համար. դուռ մը պիտի բացուի իրեն համար ատեն մը ... որ շատ այլ հեռու չէ ինչպէս որ կարծեմ. այդ դուռն երկար ժամանակ կրկին եւ կրկին կ'զգած փակած չմտայ պիտի. արդէն զօրաւոր բանալիքներ կը տեսնեմ, եւ համարձակութեամբ կ'ուզեմ ցուցնել: չըլլայ թէ վախնաս, մ եր իրջանկութեան ապագայ բանալիքն, այդ այնքան երկար ժամանակէ ի վեր բազմացեալ բանալիքն, այդ բանալիքն է դաստիարակութիւնը: Դաստիարակութիւնն հայրենասիրական. հայրենասիրութիւնն յեցեալ ի վերայ իմաստասիրութեան, եւ սա հիմնեալ ի վերայ սուրբ կրօնից:

«... Ո՛վ Հայկակ, ո՛վ հայ պատանիք, աղէկ քաղաքացի ըլլալու համար՝ պէտք է քննել սորվիլ զհայրենիս... քննեցէք և սորվեցէք ուրեմն այդ աղնիւ և բարբեր Հայտասանը, իբրեւ հայրենիք ձեր եւ դայեակ տմենայն աշխարհի. քննեցէք այդոր բարոյականը. քննեցէք այդոր բարգաւաճումն ի հարուստ լեզուին, որ ապահով դրական մէ բազմատեսակ արկածներով հնձուած գրականութեանը. քննեցէք դայն վերջապէս իր կրօնից զտութեանը եւ իր ծիսից վայելչութեանը մէջ: Այդ քննութիւնքդ, այդ ուսմանքդ, յորդոր ըլլան ձեզի աւելի քան դուրսի յարգելու զհայրենիս եւ մշակելու զայն ըստ ամենայն նշանակութեան բանիս:»

Այս հակասութիւնը շատ հասկանալի է սակայն եւ շատ արդարանալի: Այն շրջանին ուր Ալիշանի միտքը եւ քնարը կազմուեցան, հայ

ժողովուրդը թանձր տգիտութենէ մը հազիւ սթափիլ սկսած, ստրկական բարքերը թօթափելու դեռ նոր մղուած, նիւթապէս ու բարոյապէս շատ տկար՝ յարաբերաբար դեռ շատ զօրաւոր թուրքին լուծին տակ, անկարող էր վերսկսելու Մամիկոնեանց կամ Ռուբինեանց աննական ճիգը: Ալիշան, ինչպէս եւ այդ շրջանի հայ գրողներուն մեծամասնութիւնը, կը մտածէր թէ նախ պէտք էր բարոյապէս, մտաւորապէս ամրացնել հայ տարրը, եւ չմղել զինքը վազաժամ յանդդնութիւններու որոնք աղետաբեր կրնային ըլլալ: Ժամանակը քալեց, կրթութեան տարածումը եւ հայ անցեալին ծանօթացումը կերպարանափոխեց Հայոց նոր սերունդները. եւ անոնց մէջ փչեց խիզախ ու անհամբեր շունչ մը. ելան դրագէտներ, ժողովրդին ցաւերը մօտէն տեսած, զանոնք անձամբ զգացած, ու միանգամայն Արեւմուտքի յեղափոխական գաղափարներով տողորուած, որոնք այլեւս անբաւական համարեցան անցեալին ոգուժովը Հայուն արդի ցաւերն օրօրելը եւ անդործնական նկատեցին միմիայն կրթութեան տարածմանը մէջ անոնց դարձանք փնտռելը. անոնք ցնցեցին ժողովուրդը Գաղափարով մը զոր Ալիշան, — փափուկ, կաթոլիկն ու խղճահար վանականի հօգի մը՝ հակառակ իր ուղղմանը երգերուն — չէր համարձակած արտայայտել: Բայց եթէ «ուղղակի» ոչ մէկ դեր կատարած չէ Ալիշան՝ հայկական շարժումին ծագմանն ու արիւնտա յառաջխաղացութեանը մէջ, եթէ նոյն իսկ հայկական հարցը տիեզերական ուշադրութեան առարկայ եղող խնդիր մը դարձած ատեն՝ ինքը շարունակեց, ներկայէն միշտ դուրս, Անցեալին պատկերը դժեւով զրազիլ, ոչ ոք պիտի յանդգնի յայտարարել թէ Ալիշանի գործը տեղ ունեցած չըլլայ հայկական շարժումին ծնուցիչ պատճառներուն մէջ. ընդհակառակն, ամենակարեւոր տեղ մը կը բռնէ ան՝ այդ շարժառիթներու շարքին մէջ. այդ գործը, որ ծայրէ ծայր ուրիշ բան չէ բայց եթէ երգ մը ի պատիւ դիւցազնութեան եւ որ ուրիշ բանի չի ձգտիր բայց եթէ ապացուցանելու որ հայ ազգը մեծ, հզօր, ազնիւ, աղաւթաջ է եղած անցեալին մէջ, անուղղակի կերպով, բայց շատ հզօրապէս նպաստած է յեղափոխական Գաղափարին ծննդեանն ու աճմանը արդի հայ մտքին մէջ, որովհետեւ ժողովուրդ մը: Երբ քիտակցութիւնը կ'ունենայ անցեալին

մէջ մեծ ու աղատ եղած ըլլալուն, չի կրնար երկարօրէն հանդուրժել ստրկական անարգ կացութեան մը մէջ կապկպուած մնալու, եւ կը շտապէ ամէն զոհողութիւն թափել՝ այդ գեղեցիկ անցեալը զրականապէս վերանորոգելու համար Ալիշանի գործը՝ սթափեցնող, ազնուացնող, ներշնչող մեծ ձայնն է եղած որ պատրաստած եւ դիւրացուցած է Բաֆֆրի գործը:

\* \*

Կեանքը զոր Ալիշան ապրած է, այնքան սիրուն է եւ ազնիւ որքան իր գործը: Այդ կեանքը ամբողջութեամբ ներկայացնելու համար պէտք եղած ծանօթութիւնները ամենամեծ մասամբ դեռ կը պակսին մեզի: Ալիշանի մահուան առթիւ Հ. Թորոսեանի հրատարակած կենսագրականը շատ աւելի բանաստեղծութիւն կը պարունակէ քան մանրամասնութիւններ, շատ աւելի կը ձգտի այդ անսահման կորուստէն զգացուած ցաւը թարգմանելու քան այդ անհետացած կեանքին ամբողջական պատկերացումը մեզի տալու: Որո՞նք եղած են այն օտար եւ հայ գրագէտները, որ ամենէն աւելի ազդած են Ալիշանի վրայ: Բարիզի եւ Լոնտոնի մէջ ի՞նչ էին գործերը զոր կատարած է. ո՞ր օտարազգի անձնաւորութեանց հետ յարաբերութիւն ունեցած է. ի՞նչ եղած է իր դերը վանքին մէջ իբրեւ խորհրդատու, Ռաֆայելեան եւ Մուրատեան վարժարաններուն մէջ իբրեւ ուսուցիչ եւ իբրեւ տնօրէն. որո՞նք են այն աշակերտները զոր հասուցած է. ի՞նչ էին իր կարծիքները ազգային կամ համամարդկային այլեւայլ խնդիրներու վրայ. որո՞նք էին իր նախասիրութիւնները, նախապաշարումները, ատելութիւնները (եթէ ունէր), ցաւերը, հաճոյքները, երազները, — այս բոլորին մասին ոչինչ, կամ շատ քիչ բան կայ Հ. Թորոսեանի յօդուածին մէջ, եւ այդ բոլորը պէտք է որ վերահասի միաբաններէն անոնք որ Ալիշանը մօտէն ճանչցան՝ ճանչցնեն հայ ժողովրդին, որովհետեւ աններելի կ'ըլլար որ Միխիթարեան Միաբանութիւնը կորստեան մատնէր այդ պաշտելի կեանքին բոլոր մանրամասնութիւնները որոնք թանկագին են Հայութեան համար՝ իբրեւ լրացուցիչը, մեկնիչը անոր գործին:

Ինչ որ գիտենք այդ կեանքէն, կը բաւէ սակայն հաստատելու համար որ այն կեանքերէն մէկն էր ան որոնք բացարձակապէս ներդաշնակ են գործին հետ, անոր հետ խառնուած նոյնացած են, անոր մայրն ու զաւակն են միանալու մայրն: Կեանք մը ամբողջ հոգեկան ու մտաւորական տքնութեան, կեանք մը ամբողջ Գաղափարի մը զոհուած, կեանք մը ծայրէ ծայր բացարձակ անկեղծութեան մը կնիքովը զրոյշուած: Կեանք մը ամբողջ վանքի ու դպրոցի մէջ անցած, գրքերու վրայ հակած՝ անոնցմէ վերակենդանացնելու համար նուազած անցեալին պատկերը, թարմ հոգիներու վրայ ծածկ՝ անոնց մէջ ցանկու համար աշխատասիրութեան, հայրենասիրութեան, գեղեցկասիրութեան սերմերը: Իր բոլոր աշակերտները — եւ անոնցմէ ոմանք փափուկ բանաստեղծներ ու հօր գրագէտներ են եղած — խանդավառ պաշտումով մը կը պահեն յիշատակն այդ անզուգական ուսուցչին որ սիրելի, ապրելի, գործելի, գրելի սորվեցուցած է իրենց: Եւ իր բոլոր միաբանակիցները դուրդուրանքով խառն երկիւղածութեամբ մը արտասանած են միշտ անունն այդ այնքան սիրուն որքան մեծ մարդուն որ ամբողջ կեանքին մէջ իր ընկերներէն ոչ մէկը չէ վշտացուցած եւ զիտցած է ամենուն ներշնչել անունն սէր եւ անհուն յարգանք, ունենալով համեստութիւն մը այնքան անսահման որքան իր արժանիքը: Այդ համեստութիւնը տարապայման էր. իր արհամարհանքը՝ բացարձակ, ամէն շողջողուն տիտղոսներու, պաշտօնական պատիւներու, ու եւ ցոյցի համար Գեր. Հիւրմիւզի մահուանէն յետոյ շատ դիւրաւ կրնար արքահայր ընտրուել. բոլոր ուժովը հակառակած է այդպիսի ընտրութեան մը: Գերագոյն աթոռը, գահերուն գահը՝ իրեն համար՝ իր աշխատողի խոնարհ աթոռին էր: Բնաւ չէ ախորժած որ զինքը լուսանկարեն, եւ զրեթէ միշտ իրմէ զազանի է որ իր լուսանկարը հանած են: Իր հիացողունէն մէկուսն, որ մտադիր ըլլալով իր կենսագրութիւնը պատրաստել, իրեն հարցուցած էր թէ ի՞նչ տիտղոսներ ունէր եւ ի՞նչ շքանշաններ, Ալիշան հետեւեալ պատասխանը տուած է՝ «Տիտղոսներս. — Հայ եւ քահանայ. շքանշանք»:

չաննե՞րս . — Կապաս եւ գօտիս» : Ալիշանի ամբողջ հողին այս երկու բառին մէջ է :

Տպաւորութիւնը զոր իր անձը վրաս թողուց՝ երբ երեք տարին չսփ առաջ զինքը տեսայ վեհետիկի վանքին մէջ , շուարումի , խանդալատանքի եւ զմայլման բուռն խառնուրդ մը եղաւ . պարթեւ հասակով , թիկնեղ եւ վեհաշուք ծերունի մը կը սպասէի դտնել . եւ տեսայ փոքրիկ , թեթեւ , գրեթէ աննիւթ էակ մը որ գետնին վրայէն կը սահէր աւելի քան կը քալէր , եւ որ իր թոչնակի վզին վրայ կը կրէր երկրպագելի գլուխ մը ալեւոր մանուկի — ծերացած հրեշտակ մը կարծես որ երկնքէն փախեր մեր մէջն էր եկեր իր բերեղէ երգովը պահ մը մեր ցաւերն անուշցնելու համար եւ որ կ'արտորար սակաջն վայրկեան մը առաջ վերաթռիլ զէպ ի իր հետաւոր օղակառոյց կապոյտ բոյնը որուն կարօտն ունէր միշտ :

Ես փափաքած էի երթալ վայրկեան մը զինքն իր խուցին մէջ տեսնել՝ յարգանքս ու հիացումս յայտնելու համար իրեն . եւ ահա՛ առանց բողբ մը սպասցնելու՝ ինքն իսկ էր որ եկաւ այն սրահն ուր կը գտնուէի եւ առաջարկեց զիս պաշտօնեղ վանքին ամէն կողմերը . բոլոր աղաչանքս , բոլոր պնդումս՝ զինքը համազելու համար որ այդ նեղութիւնը , այդ յոգնութիւնը չաւնէ , ապարգիւն ելան . ու սախպուկեցայ , ամօթահար , շուարած , բայց բռնապատուած իր անդիմադրելի փայտէն , ընդունիլ որ ինքը , «Նահապետ»ը , առաջնորդէր ինձի սրահէ սրահ . թէ յետոյ , նշմարեցի սակայն որ յոգնութիւնը զոր կը վախնայի պատճառել իրեն , գոյութիւն չունեցող բան մըն էր իրեն համար . նրբանցքներէն կ'անցնէր այնպէս արագ ու թեթեւ քայլով մը որ գծուարութիւն կը կրէի իրեն հասնելու : Այդ առկայծ թուող լպտերը իր բոլոր բոցը դիւ պահած էր , նոյնքան անրիծ ու պայծառ որքան առաջին օրերուն , միայն ճերմակ սիրուն քողով մը հիմա պատած , որ զայն մեղմացած ցոյց կուտար տաքուստ , մինչդեռ ներքնապէս անփոփոխ էր ան : Այդ ամբողջ կրակով շինուած մարդը , որ իր երիտասարդութեան ամենէն հրեղէն օրերուն մէջ հրաժարած էր աշխարհի բոլոր հաճոյքներէն ու ինքզինքը նուիրած էր վա-

նական , «ծերունական» կեանքի մը , այդ բուռն ու փրփրայոյզ խառնուածքը , որ արդէն քսանեւեչորս տարեկան հասակին մէջ «Յուշիկներ»ու եւ «աշուղի երգեր»ուն «Նահապետ»ին , այդ Հայութեան մեծ-հայրիկի , հայ հին փառքերուն ոսկին արդի աւերակներուն մոխրին մէջէն փնտռող , հայ ազգին բոլոր պարծանքներն ու ցաւերը , յոյսերը երգող , ողբացող , օրհնող Մերունի տիպարը կը ստեղծէր ու կը հագնէր , մինչեւ իր կեանքին վերջը , այդ տրտում ու տարտամ օրերուն մէջ իսկ , երբ հոյզը երակներուն մէջ ցամքիլ եւ մարմինը կծկուել , կարկամիլ , հասնիլ ու գլուխը ձմնոնտիլ սկսած էր մահ փայլող ճերմակներովը , երբ վերջապէս ութսուն տարիներու բեռը զինքը իրօք դարձուցած էր «Նահապետ» , միշտ երիտասարդ մնացած էր , երիտասարդ՝ մաքով ու սրտով : Ու այդ հոգեկան զօրութիւնը որ անեղծ կը մնար , այնպէս մեծ էր որ կ'ելեքտրականացնէր խարխլած , արդէն մահէն ըմբռնուած մարմնիկը եւ դեռ զայն կը գործածէր՝ ժիր ու առօրէ՛ գրելով , խօսելով , ապրելով իր բոցն արտացոլացնելու : Մինչեւ վերջին օրը , Ալիշան իր գրասեղանին փակած մնաց՝ անընդհատ շարունակելով իր գործը : Իր կեանքը վերջացեր է երբ այլեւս մարմինը , հիւժուած , սպառած , չէկրցեր բաւել վեր վերցնելու այդ մշտատենդ ու մշտաշարժ համայնածախ միտքը : Մահուանը նախորդ օրը , վանականները՝ ինչպէս կը նկարագրէ Հ. Թորոսեան՝ զինքը տեսիլ են զուարթ ու աշխոյժ . առաւօտեան պատարագին եւ իրիկուան ժամերգութեան ներկայ է զըրնուեր , յետոյ խօսակցեր է միաբաններէն ու մանց հետ եւ «Հայապատում»ն ու «Արշալոյս քրիստոնէութեան ի Հայաստան»ը , իր երկու վերջին մեծ աշխատութիւնները՝ աւարտած ըլլալուն համար գոհունակութիւնը յայտներ է , բայց գիշերը , յանկարծ շնչաբղետութիւն է ունեցիլ՝ ինչպէս անցեալ ձմեռ ալ ունեցած էր քանի մը անգամ , բայց կրցած էր յաղթել մահուան այդ առաջին յարձակումներուն : Այս անգամ մահն է որ կը յաղթէ : Բժիշկը կը յայտնէ որ վրձակը շատ ծանր է այդ անգամ եւ խորհուրդ կուտայ «հոգեւոր պատրաստութիւնները տեսնել» . կէս գիշերին մօտ տեսակ մը ժամանա-

կաւոր հանգիստ կ'ուեննայ մահամերձը եւ կրնայ քնանալ քանի մը ժամ . բայց հազիւ արշաւոյսը կը ծագի , ներքին հզօր մղում մը զինքը անկողնէն դուրս կը նետէ . կ'ուզէ , ղգալով թերեւս որ վերջին պահը մօտեցած է՝ իր շունչը աւանդել խաչին ոտքը , Գրիստոսի ու բոլոր հայ նահատակներու խաչին որ իր ամբողջ կեանքին դրօշը եղաւ , — մեռնիլ՝ լսելով սուրբ մեղեդիները զոր իր հայրերը երկնեցին : «Ժամը վեց կը հնչէ , կը պատմէ Հ. Թորոսեան , — հիւանդն աչքէն բանայ , կը նայի շուրջը եւ կը հարցնէ . «Ժամը քանի՞ է» . — «Ժամը վեց է» կը պատասխանուի : «Ո՛ւր հասաւ առաւօտեան ժամերգութիւնը» , կ'ըսէ . — «Հիմակ սկսաւ՝ անմիջապէս» , կը պատասխանուի : Կը զարմանայ , եւ կարգէ դուրս նայուածք մը կը ձգէ . եւ իբր թէ աճապարանք մ'ուեննար ժամերգութեան հասնելու , կ'ուզէ կապան հագնիլ եւ անկողնէն դուրս ելլիլ : Մօտը կանգնող վարդապետը կը դժուարի հընազանդելու հասկցնելով իրեննոր կարողութիւն չունէր ելլելու : Նա կը կրկնէ խնդիրքը եւ իրեն ձեռքով եւ ուրիշներուն օգնութեամբ կը հագնի կապան , անկողնէն կ'ելլէ , եւ գողգողուն քայլերով կ'ուղղուի զէպի աղօթարանը , կը խաչակնքէ ինքզինքը եւ բազկատարած , եռանդազին կը համբուրէ խաչելութիւնը . հազիւ թէ կը դատուի անկէ , սաստիկ սարսուռ մը կը բռնէ զինքը , եւ բերնէն արիւն եւ սեւ հիւթ մը դուրս տալով՝ կը մարի առկայծ ճրագը , — կ'աւանդէ մաքուր հոգին իր հոգեւուն որդւոց թեւերուն մէջ : »

Մահ մը որ քերթուած մըն է ամբողջ , քերթուած մը ուր այդ մեծ խանդավառութեան , մեծ հաւատքի , մեծ անկեղծութեան ու մեծ մաքրութեան կեանքը վերջին կտրուկ բայց վեհապայծառ պատկերի մը մէջ կը համառօտուի . Բայց մահը անիմաստ բառ մըն է՝ Ալիշանի պէս մարդու մը հանդէպ : Որքան ատեն որ հայ ազգը գոյութիւն ունենայ , Ալիշանի գործը պիտի կենդանի մնայ , եւ անոր հոգին պիտի յաւիտենապէս շողայ՝ միշտ ներկայ , միշտ վառ , միշտ սիրուն , միշտ տաք , ետեւէ ետեւ եկող բոլոր հայ սերունդներուն սրտին վերեւ , ինչպէս իր երգած «լուսնակը զեղեցիկ լապտեր առաւածավառ» :

ԱՐՇԱԿ ԶՊՊԱՆԵԱՆ

ԽԱՉ-ՓՈՒԾ

o—o  
(Շար. եւ վերջ)  
7

Գիշերուան խոովութիւնը առաւօտուն ամբողջ քաղաքին խօսակցութեան առարկան էր դարձած : Շատերը վախերնուն իրենց խառնութենքը բացած չէին , Յրուած «խազ-փուշ»-ները գեռ կը թափառէին փողոցներուն մէջ : Յորենատէրերը կատղած էին , իսկ սովատանջները կը գովէին «խազ-փուշներ» ու վարմունքը :

Այսպիսի խոշոր դէպքեր շատ անգամ չէին յայտնեիր Շահին , կամ շատ մեղմացած ձևով կը յայտնէին : Սովորաբար զեկուցումը կը յապաղեցնէին , մինչեւ որ Շահը տրամադրուած ըլլար , եւ յարմար ժամանակ մը գտնէին պատահած անկարգութիւնը անոր յայտնելու :

Օրը ուրբաթ էր : Այդ օրը Շահը սովորութիւն ունէր քաղաքէն ոչ շատ հեռու գտնուող ու խտատեղի մը երթալ՝ աղօթելու համար : Գնացքը սկսաւ առտուն կանուխ եւ տեւեց մէկ քանի ժամ :

Ամենէն առաջ չքեղազարդ ջորիներու ստուար խումբեր , վրաններով եւ ամին տեսակ բարեբներով բեռնաւորուած , կը կրէին պատրաստութիւնները արքայականախաճաչին զոր սյնտեղ պիտի ընէր :

Յետոյ կանանոցը ճամբայ ելաւ : Մածկուած կատքերու , փակուած պատգարակներու եւ զեպակներու երկայն շարք մը լեցուցած էր այն փողոցը որ պալատէն դէպի յիշեալ ուխտատեղին կը տանէր . հարբերներով կարելի էր հաշուել անոնց թիւը որոնց իւրաքանչիւրին մէջ մէկ մէկ թագուհի նստած էր : Ասոնց ետեւէն կ'երթային հարճերու եւ պալատական նաժիշտներու պատգարակներն ու զեպակները : Գնացքը կ'անցնէր համբունթաց կերպով : Իւրաքանչիւր կողքը շրջապատուած էր խումբ մը զինեալ ներքինիներով , որոնք անդադար կ'աղաղակէին՝ «քուր-շով» . . . «քուր-շով» . . . որ կը նշանակէ «կոյր եղիբ» . . .

Ամէն աչք պէտք էր կուրանար, ամէն տեսանելիք պէտք էր փակուէր: Ոչ ոք իրաւունք ունէր Շահն-շահի կիներուն նայելու, թէեւ ծածկուած կտոքերու մէջ կ'անցնէին:

Ներքինիներու սպանալից աղաղակները լսելով, փողոցի վրայ բացուած լուսամուտները կը փակուէին, կտուրներու վրայ զբօսնող մարդիկ(1) կը հեռանային, կը թաքնուէին վերնապարսպի ետեւը: Իսկ այն մարդիկը որ փողոցը կը գտնուէին, կա'մ կը շտապէին շուտով փախչելու եւ կա'մ, եթէ ժամանակ չգտնէին փախչելու, երեսի վրայ գետինը կ'իյնային, աչքերնին երկու ձեռքով պինդ կը բռնէին եւ այդ դրութեան մէջ կը մնային, մինչեւ որ դնայքը անցնէր:

Ամենափոքր անդուշու թիւնը կը պատժուէր սեւամորթ ներքինիին արիւնահեղ խանչարով:

Կանանոցի անցնելէն յետոյ սկսաւ թագաւորի հանդերձանքը:

Անոր առջեւէն կ'երթար սարսափը: Նախ խումբ մը ջորիներ կը կրէին դալար ճագոտներու խուրճեր եւ ֆալաղաներ(2), գործածելու համար՝ եթէ հարկ ըլլար մէկը գանակոծել. անոնց ետեւէն երկու շարքով, մէկը փողոցի աջ կողմէն, միւսը ձախ կողմէն՝ կ'երթային սապարակիրներ, երկաթէ կոթով ծանր սապարները ձեռքերնին բռնած. անոնց բուրբ կողմով, որ մեծ մուրճի ձեւ ունէր, մարդոց գլուխը կը ջախջախէին, իսկ սուր կողմի մէկ հարուածովը պարանոցներ կը կտրէին: Տապարակիրներուն ետեւէն, նոյն կարգով, փողոցին աջ ու ձախ կողմէն, ինչպէս երկու անընդհատ շղթայ, մէկ քանի հարիւր ֆէրբաշներ(3) կ'երթային. ատոնք ձեռքերնին բռնած ունէին երկար վարօցներ, իսկ իւրաքանչիւրի գօտիէն քարջ ինկած էր նոյնպէս երկայն երկսայրին: Ֆէրբաշները անգաղար կ'աղաղակէին. «Պրօ'... պրի'...» որ կը նշանակէ՝ «Գ'նա'... հեռացիր...»:

(1) Պարսից կտուրները սափակ ձեւ ունենալով, այնպէս յարմարացուած են, որ ընտանիքի համար միակ զուարճութեան տեղն է, երբ կը ջանկան փողոցի անցուղարձք դիտել: Պարսից կտուրները նոյն գերը կը կատարեն ինչ որ պատշգամները մեր կողմերը:

(2) Ծեծելու գործիք մըն է, որուն փոքր տեսակները մեր հին մանկավարժները կը գործածէին զպրօցներուն մէջ:

(3) «Ֆէրբաշ» «Ֆիրուշթէ» բառէն յառաջ կուգայ եւ հոմանիշ է մեր «հրեշտակ» բառին:

Այդ ճայնը լսելով ամէն ոք ճամբէն զուրս կ'ելլէր կը հեռանար: Թէ՛ տապարակիրները եւ թէ՛ ֆէրբաշները հետիտն կ'երթային:

Վերջապէս յայտնուեցաւ արեղակնափայլ արքան:

Արեւուն ճառագայթներուն տակ իր դահարեղէն զարգերովը կը վառէր ան, ինչպէս շրացուցիչ պայծառութիւն մը:

Միայնակ էր, նժոյգը սրուն վրայ նստած էր, ոչ նուազ կը փայլէր ոսկեղէն եւ աղամանգեղէն զարգերով:

Առջեւէն, բաւական հեռաւորութեան վրայ, կը քալէին խումբ մը զինուած սեպուհներ, նշանաւոր ազնուական երիտասարդներ, իսկ ետեւէն բաւական հեռաւորութեամբ կուգային պաշտական բարձր պաշտօնեաները, յետոյ պալատական սենեկապետները, մանկլաւիկները, եւն. ամենքը շքեղազարդ ձիերու վրայ նստած էին:

Մէջտեղը՝ թագաւորը կ'երեւար ամէն կողմէ:

Ուրիշ փողոցէ մը, որ առաջինը խաչածեւ կը կտրէր, յայտնուեցաւ մարդոց ուրիշ խումբ մը, մասյլ ինչպէս թախծութիւնը:

Ֆէրբաշներու սպանալից պրօ-պրիճն անդօր եղաւ վանելու այդ յանդուգն խումբը որ համարձակօրէն առաջ մղուեցաւ եւ ճամբուն կտրքը կանգնեցաւ: Խումբէն մէկը բաժնուեցաւ եւ գետինը համբուրելով մօտեցաւ թագաւորին:

— Խաղփուչները՝ յամենօրհնեալ աճիւնք արքայից արքայի՛ աղերս ունին, ըսաւ:

Թագաւորը ձիուն գլուխը քաշեց: Մինչդեռ ոչ մէկ շնչաւոր համարձակութիւն չունէր մօտենալ այդ ճամբուն ուրկից ինքը կ'անցնէր, ընդհակառակն այդ մերկանդամ ստահակները յաճախ իր ճամբաները կը կտրէին: Բարեսիրտ թագաւորը միշտ մասնաւոր հաճութեամբ մը կը կանգնեցնէր իր ձիւն, անոնցմէ ո եւ է սրախօսութիւն մը կամ կատակ մը լսելու(4), յետոյ

(4) Խաղփուչները սրամիտ կ'ըլլան եւ սաստիկ հեղինոզ. կեանքի դառնութիւնը զանոնք փիլիսոփայ է դարձուցած, իսկ անհոգ աղատ կեանքը՝ բանաստեղծ. անոնց մէջ կան գրազէտ մարդիկ ալ: Խաղփուչները անբովիչներէն կը զանազանուին անով միայն որ առաջինները այս կամ այն կրօնական կամ փիլիսոփայական աղանդին մէջ սաստիկ մոլեռանդ կ'ըլլան, իսկ խաղփուչները աւելի ազատամիտ մարդիկ են. ատկից զատ խաղփուչները կը կաղմեն առանձին միաբանութիւն մը որ զանոնք խորին համբարշխութեամբ իրարու հետ կը կապէ: Իսկ

լիարուոն ոսկիներով զանոնք կ'ուրախացնէր : այս անգամ ալ զարձաւ իր սենեկապետներէն մէկուն ահնարկեց որ գոհացնէ ազքատները :

— «Խաղ-փուշ»ները զրամի համար չէ որ անհանգիստ կ'ընեն իրենց սիրելի թաղաւորը ազաղակեց, «խաղ-փուշ»ները եկած են անձամբ յայտնելու իրենց այս գիշեր կատարած ամենածանր յանցանքը, որպէս զի տիեզերքի արդարադատը արժանաւոր պատիժը սնօրինէ :

Խօսողը երիտասարդ ձափարն էր, որ մէկ ձեռքովը իր փոքր մանուկը բռնած էր :

Անոր վերջին խօսքերը հետաքրքրեցին թաղաւորը, իսկ ան, աւելի մտտենալով՝ շարունակեց .

— Այդ լայն փողոցը, ու ձեռքը տարաւ գէպի փողոցի երկարութիւնը, որ այժմ այդպէս մաքրուած է թաղաւորի առջեւ, առաւօտուն կանուխ ծածկուած էր սովամահներու զիւղիներով, այդ գերեզմանի պէս լուռ տուները, որոնցմէ այժմ ոչ մէկ ձայն չի լսուիր, ամբողջ գիշերը իրենց սովատանջները կ'ողբային, աղքատ ժողովուրդը հաճիներուն ցորենով, ալիւրով լի ամբարներուն մօտ կը մեռնի : Թող չեն տար որ անոր լացը, անոր ողբը, անոր աղազակը մինչեւ թաղաւորի ողորմած լսելիքը հասնի : Ստախօսները, շողքորթները, խաբբաները միշտ կը հրապուրեն այդ անաչառ լսելիքը, ամէն ինչ լաւ ցոյց տալով, ամէն ճշմարտութիւն քողարկելով եւ ստութիւնը իբրեւ ճշմարիտ ներկայացնելով : Հին թաղաւորները զիրենք չըջապատող խաբբաներու մոլորութիւններէն ազատ մնալու համար, շատ անգամ

մեզինման «խաղ-փուշ»ներու կամ տերվիշներու կերպարանք կ'առնէին, անձամբ կը մտնէին ժողովրդին մէջ, անոր ցաւելորուն ու պէտքերուն մօտէն ծանօթանալու համար . այժմ այդ փրկարար սովորութիւնը չմնաց : Թագաւորը իր ժողովրդին պէտքերն ու պահանջները հասկենալու համար կամ ինքը պէտք է մօտենայ մոլորիդին եւ կամ պէտք է թոյլ տայ որ ժողովուրդը իրեն մօտենայ : Իսկ քանի ինքզինքը անմատչելի պահէ, միշտ սխալանաց մէջ կը մնայ, Երբեւ ապացոյց որ ամէն իրողութիւն մինչեւ թաղաւորի լսելիքը չի հասնիր, բաւական է որ ըսեմ ի՞նչ այս գիշեր, «խաղ-փուշ»ները սպաննեցին քաղաքիս ամենահարուստ հաճին, կողովակցին անոր ցորենի ամբարները զոր թաքցուցած էր աւելի սուղ գնով ծախելու մտքով, սպաննեցին նաեւ քաղաքի «տարուղան» որ կը հովանաւորէր այդպիսի աւազակ մը : Երկուքին ալ զիւղիները թաղուեցան իրենց ապարանքին մոխրակոյտին տակ . ապրտամբներուն պարագլուխներէն մէկը ես էի, իսկ մնացեալները այդ թշուառներն են՝ որ այստեղ կանգնած են . այժմ արդարադատ թաղաւորը թող բարեհաճի մեր պատիժը սնօրինել :

— Դուք ոչ մէկ պատի արժանի չէք, պատասխանեց թաղաւորը՝ վրդոված : Յանցաւորը իր պատիժը կը կրէ, երբ ազօթելէ վերադառնամ : Սե՛ծ վեղիրին դէմքը տժգունեցաւ :

Թաղաւորը անցաւ : ԲԱՅՅԻ

տերվիշները առանձնական կեանք կը վարեն եւ կը բաժնուին զանազան աղանդներու : Խաղ-փուշներու հասարակութիւնը կը ներկայացնէ այն մերկ ճշմարտախօսութիւնը որ աներկիւղ յանդիմանել գիտէ, թէ՛ մեծին, թէ՛ փոքրին եւ թէ՛ նոյն իսկ թագաւորին թերութիւնները . այդ է պատճառը որ ամենքը կը քաշուին անոնց համարձակ լեզուին կծու յարձակումներէն : Մայրացեղ չքաւորութիւնը եւ ուրիշ սեփականութիւն չցանկալը՝ զանոնք վերջին ծայր անվախ է դարձուցած, կորսնցնելու ոչինչ ունի խաղ-փուշը . երբեմն ան երեւան կուգայ այս կամ այն հարուստին դրան առջեւ եւ որոշ գումար մը կը պահանջէ : Հարուստը կը վախնայ մերժել, որովհետեւ հակառակ պարագային խաղ-փուշը անոր զխուռն խաղ մը կը խաղայ : Երբ գումարն ստանայ, մինչեւ իր մոխրանոցը վերադառնալը անոր քով ոչինչ չմնար, բոլորը կը բաժնէ աղքատներուն, իսկ

երբ չ'ստանար, քանի մը օր յետոյ փողոցային երեխաների կը սկսին երգել շատ կծու պարսաւ մը յիշեալ նարուստին ընտանեկան կամ մասնաւոր կեանքին վրայ . բազմիջերու «գժոխք»ին մէջ կենակցելով տեսակ մը մոլորաչարիկ թափառիկներու հետ, որոնք քաղաքին բոլոր ծակուճակները կը մտնեն, խաղփուշը միեւնոյն ժամանակ կը ծանօթանայ քաղաքացիներուն ներքին կեանքին, եւ ատի բաւական ուրիշ կը մատակարարէ անոր մերկանգամ մուսային : Մէկը երգ մը կը յորինէ, մոխրանոցէն տղայ մը դուրս կ'ելլէ եւ կ'երգէ, շուտով երգը արձագանք կը գտնէ եւ մէկ քանի օրուան մէջ արագութեամբ բերնէ բերան կը թռչի : Պարսից մոլորութիւններու քննադատը փողոցային երգն է զոր գրեթէ ամէն օր կարելի է լսել միշտ նորանոր եղանակներով, իսկ երգերու հեղինակը՝ դառնացած բողոքող թշուառութիւնն է :

ԳՍՐՈՒՆԻՆ ԵՐԳԸ

— 0 —

Իմ ծաղկազարդ անիւներով օգաչու կառքիս անջեւէն՝ զոր թիթեռնիկներու հոյլեր կը քաչեն, կը թեւեն գողար Դաշնակու թիւնները, որոնց մէջ յաւիտենական Սէրը կը բարտխէ։ Եւ թռչունները որ իրենց կապոյտ դաշլայլովն անտառներու լուսեան ճերմակ էջը կ'ասղնագործեն, պատգամաւորներն են իմ գալուստս աւետող։ Ետեւէս կը սուրան բոլոր աստղացան ժպիտները, որոնց մէջ Յանկութեան ըոցը կը ցոլանայ, եւ դառնուկները որ մատղաշ դալարիքներուն մէջէն կը մային, իմ դեղեցկութեանս փառքը կ'երգեն։

Տիեզերքին մշտանորոգ Երիտասարդութիւնն եմ ես, հրավառ ու խօշ երիտասարդութիւնը որ լոյսով արբշիտ երկինքին մէջ կը կայտոէ։ Կուգամ, եւ իմ խարտեաշ համարսրիս սակ՝ բնութիւնը կը վերակենդանանայ. իմ շունչս, գաղջ ու բուրբուսնաւէտ, իրերն իրենց թմրութենէն կ'արթնցնէ. իմ քայլերուս սակ մերկացած դաշտերն իրենց տօնական գոյները կը վերլզենուն. իմ մեծ ծաւի պատմութեանս հպանցքը երկինքին երեսէն ամէն մեղամաղձութիւն կը սրբէ. եւ իմ ոսկի ծիծաղիս միակ կայծը կը բաւէ վանելու համար խոժոռ ամպերը, որոնց ծոցին մէջ կործանարար մրրիկները կը թաքչին։

Ես Շնորհն եմ արեւելքին մէջ սփռուած, ես անմահ իզու թիւնն եմ աշխարհներուն վերեւ սաւառնող. ես երկնաբնակ վեատեան կոյսն եմ որ կնանքի բոցը մշտավառ կը պահեմ, իմ աչքերուս անհուն կապոյտին խորը Երջանկութեան անցնիլը կը տեսնեն մարդիկ՝ ինչպէս հեռուոր ու անորոշ առագաստի մը սահիլը ծովուն հորիզոնէն։ Մատներէս հեշտութեան խունկերը կը հոսին, ու մազերս օդին մէջ կը տարածուին ինչպէս մոգական գրօշը Սիրոյ. իմ

հոգիս տաճարն է անպարագիծ՝ ուր բնութեան բիւրաւոր ձայներն իրենց հրճուանքի երգը կը թնդացնեն։

Մարմինս ծաղիկներուն կուսութեամբն է շինուած, եւ երակներուս մէջ թարմ առուակներուն արծաթէ մրմունջը կը վազէ։ Մազերուս մէջէն լուսինն իր հալած ազամանդի ալիքները կը փազփեցնէ։ Իմ ծոցէս կը հոսի կաթը որ երկիրը կը սնուցանէ եւ մեղրը զոր մեղուները կը ժողվեն երգելով. կարաչներն իմ ճակտէս փոխ կ'առնեն իրենց փետուրներուն սպիտակութիւնը, եւ արշալոյսն իր մեծ ամօթխած կարմրութիւնն իմ այտերէս կը քաղէ։ Սօսաւիւնը որ ծառաստաններուն մէջէն կ'անցնի, իմ շրթներուս սարսուռն է, եւ իմ ձայնս է որ կը նուայ մեղկ զեփիւններուն քաղցր մեղեգիին մէջ. իմ յունչս է որ կը կազմէ բարակ թափանցիկ ճերմակ ամպերը որ կապոյտին մէջ կ'երազեն. ու ծիր-կաթիւնը հարսանեկան քօղն է որ ճակտիս շուրջը կը թրթոյայ։

Ես Հրճուանքն եմ, եւ Մոռացումն եմ ես, Ճաւերն իմ նայուածքիս տակ կը հալին, եւ աչքերը կը ճառագայթեն իմ ծիծաղիս լոյսէն։ Ես Դեղեցկութիւնն եմ, եւ ես եմ որբարութեան հաւատալ կուտամ։ Եկէք ինձի, կեանքով ուսած սրտեր որ նոր կը բացուիք լոյսին, եկէք իմ պտուղներուս բարեկամ ստուերին մէջ միբճիլ, եկէք ձեր նորածիլ սէրը խառնել իմ անսահման տարփանքիս, որուն կրակը կը գողզըզացնէ երկինքին աստղերն ու դաշտերուն ծաղիկները։ Ահա ձեռքերս կը տարածուին, անհո՛ւն, աշխարհիս վերեւ. եւ հոգիներուն մէջ անվախճան օրհնութիւնը կը թափեն։ Թող կեանքը վերանորոգուի ու վերածաղկի, եւ թող յաւիտենական Գործը վերսկսի։ Եկէ՛ք երազել, եկէ՛ք սիրել, եկէ՛ք ապրիլ իմ մէջս։ Բւ իմ բոլոր ձայներս ձեզի համար արեւելքական հարսները պիտի երգեն։

ԳՍՐՈՅԻ



### ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

ՀԱՅ ԱՐՈՒԵՍՏԻ ԵՐԵՎԱՆԻ ՄԸ — Մայիս 29ի իրիկունը, «Սալ տէ-զ-Ակրիքիւթէօր օր Ծրանա»ի մէջ տեղի պիտի ունենայ գրական եւ գեղարուեստական երեկոյթ մը: Պ. Կապրիէլ Մուրէ, ֆրանսացի ծանօթ գրադէան ու գեղարուեստական քննադատը, բանաստեղծիւն մը պիտի կատարէ Հայոց պատմութեան, գրականութեան եւ գեղարուեստին վրայ: Քոմէտի Ծրանաէդի եւ Օտէոնի մեծագոյն արուտագէտներէն մէկ քանին պիտի կարդան հայկական հին եւ նոր բանաստեղծութեան էջեր՝ ֆրանսերէնի թարգմանուած: — Երեկոյթը տեղի պիտի ունենայ ընդ հովանաւորութեամբ ֆրանսո-հայկական ընկերութեան անգամներէն պ. պ. Էրնէսթ Լավիսի եւ Տընի Բոչէնի: Մանրամասնութիւնները «Անահիտ»ի յառաջիկայ թիւով:

ԱՂԱՅԵԱՆԻ ՅՈՒՅԵԼԵԱՆԸ. — Թիֆլիսէն մեզի կը հաղորդեն թէ Ղազարոս Աղայեանի քառամնամեայ գրական գործունէութեան յոբելեանը տօնելու համար կազմակերպիչ յանձնախումբ մը կազմուած է եւ թէ այդ յոբելեանը պիտի կատարուի մայիս 10ին (հին տոմար):

Ղազարոս Աղայեան ուսանող գրականութեան ամենէն ինքնատիպ եւ ամենէն սիրուն զէմքերէն մէկն է. իր գործերը, որ գծադրաբար արեւմտեան Հայոց քիչ ծանօթ են, փափուկ, զգայուն, թարմ ու խորապէս «հայ» ներշնչման մը կնիքը կը կրեն իր ոտանաւոր եւ արձակ քերթուածները, որոնց մէջ հայկական աւանդութիւններն ու բարձրը կը ցոլանան ինչպէս վճիտ ու հարազատ հայելի մը մէջ, գործն են առողջ, ազնիւ եւ մաքուր հոգիի մը որ դիտցած է ինքզինքն արտայայտել պարզ, համեղ, «բարի» ոճով մը:

Ռուսահայ հասարակութիւնը երախտագրտութեան շատ բնական պարտք մը կը կա-

տարէ՝ տօնելով Աղայեանի յոբելեանը, կը հրաւիրենք «Անահիտ»ի բոլոր ընթերցողները մասնակցիլ այդ յարգական ցոյցին:

Հեռագիր, նամակ եւ նուիրատուութիւն պէտք է սղարկել հետեւեալ հասցէներուն. Ս. Բարաեան, Ս. Քալանթարեան, Իշխ. Մ. Թումանեան, Թիֆլիս:

ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆ ՄԱՐԻՅԵՒ. — Մեր ընթերցողներուն ուշադրութիւնը կը հրաւիրենք դարձեալ այս գեղեցիկ եւ սրտաշարժ գաղափարէն վրայ եւ կը հրաւիրենք զանոնք աջակցելու անոր իրագործումին: «Անահիտ»ի խմբագրութիւն տաք ֆրանք զրկեց պ. Շլէօմպիթէին: «Բրօ արմենիա»յի խմբագրութիւնը զրկած է յիսուն ֆրանք: — Նուիրատուութիւնները պէտք է զրկել հետեւեալ հասցէին՝

M. Schlumbreger, 78 Rue d'Assas:

Պ. ԱՐՄԷՆԵԱՆԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆԵՐՆ Ի ԹԻՖԼԻՍ. — Թիֆլիսի թերթերէն կ'իմանանք թէ պ. Արմէնեան արդէն երկու ներկայացում տուած է՝ ամենամեծ յաջողութեամբ: Առաջին անգամ խաղացեր է Կոբէի «Քրեմոնի վնագործ»ը (հայերէն թարգմանութիւն պ. Արմէնեանի), եւ երկրորդ անգամ՝ Միսէի «Վաղաժամ վճիտ»ը (թարգմ. Ս. Չօպանեանի): Թիֆլիսի թերթերը գովեստով կը խօսին Արմէնեանի բնական եւ վայելուչ ձևերուն, ճկուն եւ ճարտար միմիքին ու գերերու ուշիմ ըմբռնումին մասին: Ուրախութեամբ կ'արձանագրենք այդ առաջին յաջողութիւնները որոնք կը հաւաստեն թէ յոյսերը որ դրուած էին պ. Արմէնեանի վրայ՝ իրաւացի էին:

Պ. Վ. ՄԱՆՕՆԵԱՆԻ ՏՈՒՑԱՀԱՆԴԵՍԸ. — Գահրէէն մեզի կը հաղորդեն թէ պ. Վարդան Մախօխեան, Պերլինաբնակ հայ նկարիչը, եղբայր ծանօթ հայ բժիշկ Տր. Մ. Մախօխեանի, այդ քաղաքին «Արուեստագիտական Ակումբ»ին մէջ ի ցոյց դրած է իր գործերէն 82 կտոր: Գահրէէ Ծրանսերէն թերթերը, «Ղ. Բրոկրէ» եւ «Ժուրնալ տիւ Գէր», մեծ գովեստով կը խօսին հայ արուեստագէտին ինքնատիպ ու խորունկ տաղանդին վրայ որ ի յայտ կուգայ մանաւանդ իր ծովանկարներուն մէջ:

ԱՆԳԼՕ-ՀԱՅԿԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿԵՆՈՒԹԻՒՆՆ Ի ԲԱՐԻՉ .—Անգլո-հայկական ընկերակցութեան քարտուղար պ. Աթքին եւ անդամներէն էրիտասարդ անգլիացի աղնուական մը, Լորա Գոլիէր որոնք վերջերս Բարիզ կը գտնուէին՝ ընկերակցութեան նախագահ պ. Սթիվընսընի հրահանգով ապրիլ 2ի չորեքշաբթի օրը, Օթէլ Լուվուայի մէջ ճաշի հրաւիրեցին բարեգործակ մէկ քանի Հայեր որոնք գործակցած են այդ ընկերակցութեան հետ, ինչպէս եւ մէկ քանի Ֆրանսացի հայաստէրներ եւ «Բրօ Արմենիա» յի խմբագրութիւնը : Ներկայ էին պ. պ. Տընի Գոչէն, Երէց Արքիա, Փուչէր, Կոմս տը Վիրբուա, «Բրօ արմենիա» յի խմբագրութեան քարտուղար պ. Լոնկէ, Բարիզի անգլիական գեսպան պ. Մոնսընի երկու որդիները եւ Լաֆան. «Բարի Նուվէլ» գումակալութեանց ներկայացուցիչները, տիկին եւ պ. Բրաուֆցրտ, «Տէյլի Նիւզ» թարիղեան թղթակիցները, պ. պ. Իսքէնտէր, Չերազ, Քէլէկեան խան, Մ. Թամամչեան, Ե. Թընկըր եւ Ա. Տօպանեան. ուրիշ բազմաթիւ Ֆրանսացի հայաստէրներ, նոյնպէս հրաւիրուած, դժբաղդարար չէին կըրցած ներկայ գտնուիլ. պ. Աթքին իր բաժակածառին մէջ յայտնեց թէ պ. Սթիվընսըն, անգլո-հայկական ընկերակցութեան նախագահը զրկած էր զինքը եւ պ. Գոլիէրը՝ ոչ շունել Բարիզի Հայերը եւ ըսել անոնց թէ անգլիացի հայաստէրները երբեք չեն մոռցած հայկական դատը, եւ երկրորդ շնորհաւորել Ֆրանսացի հայաստէրները որ միեւնոյն դատը այժմ կը պաշտպանեն մեծ անձնութեան թեամբ եւ հոանդով. պ. Աթքին շնորհակալութիւն յայտնեց պ. Իսքէնտէրին այն բոլոր թանկագին աջակցութեան համար զոր տարիներով ընծայած է՝ Բարիզի Հայկական Հայրենասիրական ընկերակցութեան միւս անդամներուն հետ՝ անգլո-հայկական ընկերակցութեան. շնորհակալութիւն յայտնեց նաեւ «Բրօ Արմենիա» յի խմբագրութեան որ այնքան կորովի պայքար մը կը մղէ ի նպաստ հայկական դատին. շատ գովելի գտաւ Տանիմարքացի հայաստէրներուն կողմ որով «Բրօ Արմենիա» յի առաջարկած են Եւրոպայի ամէն ազդէ հայաստէրներու համաժողով մը գումարել հայկական դատին լուծման նպաստելու միջոցներուն վրայ խորհրդակցելու համար եւ հաւատեց թէ անգլիացի հայաստէրները յօժարակամ պրտի մասնակցին այդպիսի համաժողովի մը :

Պ. Արքիա, Ֆրանսացի բողոքական երէց մը, որ ջարդերու չըջանին, հայասիրական հրատարակութիւններ ըրած է եւ շատ մը փախտական Հայերու օգնութիւն հասուցած, յու-

զեալ ճառով մը իր մշտալատ համակրութիւնը յայտնեց հայկական դատին :

Պ. Տընի Գոչէն բացատրեց թէ անհնար էր որ Ֆրանսական հասարակութիւնը չհանաքրգուէր դատովը ժողովրդի մը որ դարաւոր հալածանքներու մէջէն իր կրօնքը, լեզուն, ազգայնութիւնը յամառած է պահպանել՝ անհուն զոհարութեամբ եւ սովորութեամբ, եւ թէ բնական էր որ Ֆրանսացիք, ինչ կուսակցութեան ալ վերաբերին, համակիր եւ տշակից պիտի ըլլային այսպիսի դատի մը :

Պ. Տօպանեան շնորհակալութիւն յայտնեց Անգլո-հայկական ընկերակցութեան անդամներուն այս հայասիրական գումարման ազնիւ գաղափարն ունեցած ըլլալուն համար. «Հայերը, ըսաւ, իրենց մարտիրոսութեանը մէջ որ դեռ կը տեւէ, միւթարութիւն մը կը զգան դոնէ տեսնելով թէ իրենց դատը, որ առաջին օրերուն սակաւաթիւ պաշտպաններ կը հաշուէր Եւրոպայի մէջ, այսօր յաղթած է այն բոլոր սուլթանաշունչ, չարամիտ, նենգ ու ստապատիր զրոյցներուն որոնք իր սրբութիւնը կը խեղաթիւրէին եւ իր յաջողութեանը սրգելք կը հանդիսանային, եւ այժմ Անգլիոյ, Ֆրանսայի, Իտալիոյ, Տանիմարքայի, Ռուսիոյ եւ նոյն իսկ Գերմանիոյ բոլոր անկախ եւ ազատասէր մտքերն իրեն բարեկամ կը դոնէ : Հայերը, հակառակ իրենց դատին դէմ կանգնող բազմաթիւ խոչընդոտներուն : Խորապէս համոզուած են որ պիտի յաջողին հասնել իրենց նպատակին, որովհետեւ գիտեն թէ իրենց նըպատակը արդար է, եւ որովհետեւ իրենց մէջ կը զգան ուժ՝ տոկալու եւ մաքառելու, բայց եթէ յաջողին, այդ յաջողութեան մէջ մեծ բաժին մը պարտական պիտի ըլլան եւրոպացի հայաստէրներուն ազնիւ ու հզօր աջակցութեանը» :

Պ. Լոնկէ ցաւ յայտնեց որ այս գումարումին ներկայ գտնուել կրցած չըլլան պ. պ. Քլեմանսօ, Ս. Ֆրանս, Ժորէս, Բրէսանսէ եւ Քիլեար, որոնք այնքան ազդեցիկ զեր մը կատարած են եւ կը շարունակեն կատարել ի նպաստ հայկական դատին. «ուրախ եմ, ըսաւ, տեսնելով որ անգլիացի հայաստէրները կուգան աջակցել Ֆրանսացի հայաստէրներուն, որովհետեւ անհրաժեշտ կը գտնամ որ ամէն ազգի ազատականներն ու մարդասէրները միանան օգնելու համար Հայոց որոնց պահանջները արդար են եւ գործնական» :

Պ. Իսքէնտէր քանի մը բառով յիշատակեց այն մեծ ծառայութիւնները զոր Անգլո-հայկական ընկակցութիւնը մատուցած է հայ դատին, գրուատեց այն կորովի ու արդիւնաւոր պայքարը զոր այժմ «Բրօ Արմենիա» յի

խմբագրութիւնը կը մղէ ի նպատակայ դատին, եւ փափաք յայտնեց որ Տանիմարքայի հայասէրներուն առաջարկած միջազգային հայասէրներու համաժողովի մը գումարման գաղափարն իրականանայ ընդհուպ :

Պ. Թամազեան շնորհակալութիւն յայտնեց, յանուն Ռուսիոյ Հայոց, բոլոր եւրոպացի հայասէրներուն, եւ ի մասնաւորի պ. Տընի Բոչէնին. «Հայերը, ըսաւ, ուր ալ գտնուին, գիտեն թէ Ֆրանսայի մէջ ունին Տընի Բոչէնի մը որ միշտ պաշտպանած է եւ միշտ պիտի պաշտպանէ Հայոց դատը» :

Այս ճաշին ներկայ գտնուող Հայերը Անգլո-հայկական ընկերութեան ներկայացուցիչները ինչպէս եւ պ. Մոնսընի որդիները ճաշի հրաւերեցին ապրիլ 8-ը ուրբաթ օրը Բաֆէ Բիշ : Բաժակաճառեր արտասանուեցան պ. պ. Իսքէնտէրի, Չերազի, Չոպանեանի, Թամազեանի, Քէլէկեան խանի, Ա. Թ. քինի, Լորտ Բոլիէրի եւ Բոլիոնի կողմէ, պ. Իսքէնտէր բաժակ առաջարկեց ի պատիւ պ. Ա. Թ. քինի, պ. Չերազ ի պատիւ անգլո-հայկական ընկերակցութեան հիմնադիր պ. ձէյմա Պրայսի պ. Չոպանեան ի պատիւ Նեւտոնի, Շէքարիի եւ Կլատտոնի մեծ եւ ազատասէր Անգլիային. պ. Քէլէկեան ի պատիւ տիեզերական հայասէր մամուլին. պ. Թամազեան ի զձ յայտնեց որ Անգլիա եւ Ֆրանսա միշտ համաձայն կարենային գործել, որպէսզի կեղեքուող ազգութիւններու դատը արդարօրէն լուծուէր ինչպէս անցեալին մէջ :

«Բրո Արմենիա» յի խմբագրութիւնն ալ ճաշի հրաւերեց ապրիլ 8-ի շաբաթ օրը Բաֆէ Մարկըրի անգլո-հայկական ընկերակցութեան ներկայացուցիչներն ու մէկ քանի հայասէր եւրոպացիներ : Ներկայ եղած են պ. պ. Կէօրի Պրանտէս, Է. աք Բոպերթի, Սթենլէն, Բրոֆ. Ղամբարեան, Մարտէլ Սամպա, Շարլ եւ Ժան Լոնկէ, «Տէլի Նիւզ»-ի, «Սըն»-ի եւ «Լոքալ անձայեր»-ի թղթակիցները եւ ար. Լորիս Մելիքով :

Բաժակաճառեր արտասանած են պ. պ. Ա. Թ. քինի, Պրանտէս, Սամպա, Ղամբարեան, Շարլ Լոնկէ, Բոլիէր, «Լոքալ անձայեր»-ի թղթակիցը եւ ար. Լորիս Մելիքով որ յանուն «Բրո Արմենիա» յի խմբագրութեան շնորհակալութիւն յայտնած է ներկայ հայասէր եւրոպացիներուն, «Բրո Արմենիա» յի նպատակը եւ հայկական պայքարին ուղղութիւնը բացատրած է : Ներկաները որոշած են որ տանիմարքայի հայասէրներուն առաջարկութեանը համեմատ եւրոպացի ամէն ազգէ հայասէրներու համաժողով մը գումարուի յուլիսէն առաջ, Պրիւսէլի մէջ : Պ. Բիէր Բիշեար պիտի զրկէ հրաւերները եւ պիտի ընդունի պատասխանները :

ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂԱՅ ՀԱՄԱԺՈՂՈՎՐ. — Եւրոպայի Հայ Ուսանողաց Միութեան հինգերորդ Համաժողովը տեղի ունեցաւ Ժընէվ, ապրիլ 1էն 6, Ներկայ են եղած հարիւր յիսուհի չափ ուսանողներ Պերլինէն, Բարիզէն,

Լիոնէն, Միւնիխէն, Տարմազատէն, Բարլարուհէն, Թիւպինգէն, Մոնթելիէն, Միթվետէն, Պրիւսէլէն, Լիէժէն, Զիւրիխէն, Լոդանէն, Ժընեվէն :

Պ. Մալուճեան, որ կը նախագահէր, իր բացման ճառին մէջ ողբացեալ Ալիշանի եւ Էտիրնէի հերոսներուն մահուան յիշատակն ողած է եւ ներկաները սաքի ելած են ի պատիւ այդ յարգելի անուններուն : Պ. Մ. Յովհաննէսեան հիւրընկալ Չուիցերիային ներբողն է ըրած : Տիկին Իլսէ Ֆրաբան հայ զբօսչին խորհրդանշանական իմաստը մեկնած է. եւ պ. Լուի Վուարէն, Ժընեվի Համալսարանին ուսուցիչ իր բուռն համակրութիւնն յայտնած է հայ ուսանողներուն :

Յետոյ պ. Մալուճեան տեղեկութիւններ տուած է այն ընդարձակ Հայամատեանին վրայ գոր հայ Ուսանողաց Միութիւնը մտադիր է հրատարակել եւրոպացի մեծանուն գրողներու, իմաստասէրներու, գիտնականներու եւ պետական մարդոց աջակցութեամբը :

Համաժողովը հետեւեալ որոշողութիւններ քուէարկած է. 1. Շարունակել մամուլի եւ բանաստեղծութեան միջոցաւ գործօն փրփականոր. 2. Կովկասի եւ Թիւրքիոյ համար մասնաւոր հրատարակութիւններ ձեռնարկել. 3. Տաճկաստան զրկել պատգամաւորներ որ տեղւոյն վրայ կացութիւնը քննեն :

Այս սարուան հրատարակութեանց եւ փրփականոր ծաղքերուն համար պիւտէն որոշած է 25,000 ֆրանք, որուն 5000ը վերջին նիստին մէջ արդէն ստորագրուած է :

ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎՆ Ի ՄՈՆԱԲՈ. — Պ. Բիէր Բիշեար որ եւրոպայի Հայ Ուսանողաց Միութեան կողմէն պատգամաւոր էր զրկուած Մոնաքօ գումարուած Խաղաղութեան Միջազգային Համաժողովին, Պերլինի վեհաժողովէն ի վեր տաճկահայ ժողովրդին կացութեանը մասին մանրամասն եւ յուզիչ տեղեկագիր մը ներկայացնելով, յաջողած է քուէարկել առաջ, միաձայնութեամբ, հետեւեալ որոշողութիւնը.

«Խաղաղութեան Տասնութեկերորդ Համաժողովը, Իններորդ եւ Տասերորդ Համաժողովներուն յայտնած իղծերը վերանորոգելով,

«Ստիպողաբար կը խնդրէ Պերլինի գաշնադիրը ստորագրող պետութիւններէն որ Լաշէի մէջ պաշտօնական դեսպանաժողով մը գումարեն հայկական խնդիրը լուծելու համար 1895 մայիսի բարենորոգմանց ծրագիրը գործադրելով

«Եւ նկատելով որ նոր ջարդեր կը վախցուին Սասունի գաւառին մէջ, կը խնդրեն նոյն պետութիւններէն մօտակայ քաղաքներու մէջ իրենց ունեցած հիւպատոսները Մուշ զրկել, քանի որ եւրոպացի պաշտօնական վկաներու միմիայն ներկայութիւնը կարող է վերադարձն արգիլել արիւնոտ դէպքերու որոնք ընդհանուր զայրոյթ յառաջ կը բերեն :»

### ԵՒԳԻՆԵ

ԹԱՏԵՐԳՈՒԹԻՒՆ ԵՐԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՄԲ  
Ե Ի Ր Վ Ա Ն Ջ Ա Գ Է Ի

(Շար. եւ վերջ)

— 0 —

Այդպէ՞ս է արդեօք ինքը, տղամարդը :

Նրան միանգամայն խորթ ու անծանօթ են այն ամենը ինչ որ տեսանք կնոջ հոգու եւ մարմնի մէջ : Կուսական անարատութեան զգացման հետքն անգամ չկայ, տղամարդու մէջ, որին ընդհակառակը, բնութիւնը պարզուել է մի տաք ու կրքոտ խառնուածք, նախաձեռնութեան ոգի, վառվառն եւ անզուսպ սեռական ցանկութիւն եւ բուռն վաւաչոտ հաճոյք : Դարեւի կարծիքը այսպիսի խնդիրներում գրեթէ օրէնքի նշանակութիւն ունի . «արուն եւ միշտ, ասում է նա, որ որոնում ե կզինեմ» . եւ ի նկատի ունեցէ՛ք, այդ ուժղին կիրքն ու բուռն ցանկութիւնը բնութեան կողմից չեն սահմանափակուած ո՛չ մի պատւարով, ո՛չ Ֆիզիքական նեղութիւն եւ տանջանք, ո՛չ յղութեան սարսափ, ո՛չ զաւակնւրի հոգս եւ ո՛չ էլ նոյն իսկ մի մեծ բարոյական զրկանք . . .

Այսպէս ուրեմն, ինքը, բնութիւնը մի մեծ խրամատ է գրեւ մեր երազած հաւասարութեան մէջ : Կնոջ ցանկութիւնները նուազ են, կիրքը սահմանափակ, սեռական գրգիռն ու հաճոյքը չափաւոր, օժտուած՝ կուսական զգացումով հոգեպէս, եւ ապահովուած Ֆիզիքապէս . — այնինչ տղամարդունը ամէն բանով բուռն, զօրեղ, զերազանց, անզուսպ առանց որ եւ է բարոյական կամ Ֆիզիքական խոչոր պատախառնատութեան ու կորուստի :

Ո՞վ ուրեմն այս երկու արարածներից բնութեան է համբերող ու ժուժկալ լինելու . . . եւ եթէ մենք բաց ենք անում համբերութեան ու զգաստութեան սահմանները երկուսի առաջ հաւասարապէս, մի անարդարութիւն չէ՞ զաւրպեօք բնութեան օրէնքների կամ հէնց հաւասարութեան դէմ, որպէս սկզբունք . այնպէս որ, մեր կրթուած ու դիպլոմաւոր Ալավէրտեանը, որ մասնազէս է մարդկային օրէնքների եւ ճարտար իրաւարան, բնութեան օրէնքներին եւ իրաւունքներին՝ որոնք յաւիտենական են եւ անխախտելի, միանգամայն անտեղեակ է երեւում :

Բայց կարելի է առաքել, որ մարդասիրութիւնն ու ներքին ձայնը մեզ գրգռում են իսկի ուշադրութեան չառնել բնութեան բիրտ ու կոպիտ օրէնքները : Իսկ մեր ներքին ձայնը չի կարող չհամաձայնիլ Ալավէրտեանի հետ,

որը մեծահոգութեամբ ներում է իր ամուսնույանցանքը : Մեր դարու լայն ու մարդասէր գաղափարները չեն կարող թոյլ տալ որ մարդը վայելի ամէն տեսակ ազատութիւն, իսկ կինը ճնշուած ու փակուած մնայ հարեմական կապանքների տակ : Դա դէմ է արդարութեան եւ հաւասարութեան ամենատարական հասկացողութեան, որ եւրոպական լուսաւորութիւնը մտցրել է մեր մէջ :

Ալավէրտեանի խիղճն ու բանականութիւնը պահանջում էին որ նա սուս ու փուս լռէ, ու ներէ, այն պատճառով, որ ինքն էլ անարատ մէկը չէ եղել . «Ես հաւասարութեան երկրպագու եմ, մտածում է նա կինս յանցանք եւ սխալ է գործել, բայց դէ՛ ես էլ մի բարի պտուղ չեմ եղել. հետեւաբար մենք քոթս ենք . — ըստ առածի՝ այժը կաւէն գուրս : »

Այս գաղափարը կայ օգի, մամուլի եւ քիչ թէ շատ կըթուած հասարակութեան մէջ, բայց եւ այնպէս, ամէն մարդ, ինքն իրան, իր սրտի խորքում, մի քիչ այլ կերպ է մտածում : Հեշտ է, իհարկէ, թատրոնում ոգեւորուել ու ծափահարել ներող եւ ազատամիտ հերոսին, բայց սոյն «գրաման» ունենալ իւր սեփական տանը, տեսնել իւր մօրը, կնոջը, հարսին եւ կամ քրոջը Եւզինէի գերում, կարծեմ մեզանից ոչ ոք չէր ցանկանայ :

Ի՞նչ է պատճառը, միթէ մեր խելքն ու բանականութիւնը, մեր խիղճն ու համոզումները, մեր ուսումնն ու կրթութիւնը բաւական չեն խեղդելու մեր մէջ գաղանը եւ թօթափելու զարհրով խտացած բնազդը . . . եւ եթէ կայ մի այդպիսի կտիւ կամ տարակուսանք, չունի՞ զաւրպեօք մի խոր, ընկերաչանքաբոյական հիմունք, որը մենք չենք կարող ճնշել հակառակ մեր բոլոր ճիգ ու ջանքերին : Չունի՞ն արդեօք Ալավէրտեանի հոգեկան տանջանքները խոր բարոյական պատճառներ : Մի պատճառք չէ՞ արդեօք, որ այդ ամենը մենք վերագրում ենք գաղանի չար բնազդին, որ բղխում է կոյր նախանձից եւ սնունդ առնում արուի խանդոտ հոգու խորքերում . . .

Կան գոցէ մեր գիտակցութեան մէջ ազօտ մնացած կայծեր, որոնց գոյութիւնը մենք ուրանալ չենք կարող՝ հակառակ մեր բոլոր համոզումներին :

Արդ, քննենք ու վերլուծենք Ալավէրտեանի տրամաբանութիւնը, եւ տեսնենք, համապատասխանում է զաւրպեօք գաղանի հաւասարութեան եւ մարդասիրութեան սկզբունքներին :

«Ես կնոջս ներում եմ» . ինչո՞ւ, որովհետեւ ե ոինքս արատաւոր եմ, — այն՝ ինչ ո ինձը

ներելի է, ներելի է ե՛ւ նորան, քանի որ մենք հաւասար ենք:»

Շարունակենք այս տրամաբանութիւնը. — «ես արատաւոր եմ, հետեւաբար կինս էլ կարող է արատաւոր լինել. ես աւազակ եմ, իրաւունք եմ տալիս նոյնը լինելու ե՛ւ կնոջս: անառակ եմ, թող կինս էլ անառակ լինի, հրէշ եմ, կարող է կինս էլ հրէշ դառնալ...»:

Այստեղ անմիջապէս յառաջ է գալիս մի հարց. ես իրաւունք ունի՞մ արդեօք «արատաւոր», «կեղտոտ» եւ «հրէշ» լինելու. — ո՛չ: — Ինչպէ՞ս հապա իմ չունեցածը ես իրաւունք եմ համարում տալու ուրիշին: Սա մի ակնհարեւ անիմաստութիւն է: Եւ ի՞նչ է իմ տուածն ըստ էութեան. իմ արատը, իմ կեղտը եւ իմ ապականութիւնը: Ես ստոր եմ եղել, ես թեւրացել եմ վարք ու բարքի մէջ եւ եւ թոյլ եմ տալիս նոյն թերութիւններն իմ կնոջը. ես հաւասարեցնում եմ նրան իմ արատի, կեղտի, թերութեան եւ ա՛յն ամենի հետ, ինչ որ ինքս իբրեւ բարոյական մարդ իրաւունք չունիմ անելու: Պարզ ի պարզոյ ես նորան տալիս եմ անբարոյապանութիւն: Իմ տուածը մի գրական արժանիք չէ՛, այլ բացասական կողմը: Հետեւաբար այստեղ իրաւունքի մասին խօսք անգամ լինել չի՛ կարող. ա՛յն ինչ որ արդիւնք է մեր թուլութեան ու մեղկութեան տալիս ենք վայելելու մեր կնոջը: Բարձրացում, զարգացում չէ՛ գա կնոջ համար, այլ մի կատարեալ անկում:

Կը ներէ՞ր արդեօք Ալալէրտեանը, եթէ ինքն անարատ լինէր, եթէ նա իր մարմնի եւ հոգու բոլոր գանձերը պահած լինէր մի անարատ ընտանիք կազմելու համար: Այն ինչ որ նա է տրամաբանում, մի կատարեալ ծաղր է հաւասարութեան համար. «Ես մեղաւոր եմ եղել, կարող էր կինս էլ նոյնը լինել» . — Կինս ուրեմն արդարանում է իմ մեղքով: Ուրիշ խօսքով, մենք ներում ենք ոչ թէ մեր կնոջը, այլ մեղ միայն: Նորա անցանքը եւ ծածկում եմ իմ միտով. ներում եմ նորան, որովհետեւ ինքն ինձ ներել է... այս ամենը ինչպէս տեսնում էք բութում է մի կատարեալ մեղկութիւն, մի ստոր եսամոլութիւն, եւ մի շնական ծաղր... Հերիք չէ որ ես յանցաւոր եմ, ես համարձակում եմ «ներելու» նաեւ ուրիշին եւ այդ ուրիշը դեռ «14 շահի էլ պարտք է մտում ինձ», եւ այս ամենը ես ծախում եմ հաւասարութեան, վեհանձնութեան եւ մարդասիրութեան անուններով...:

Սա ինչպէս տեսնում էք, մի շա՛տ ձեռնտու առուտուր է տղամարդու համար. «Ես չեմ կարող քեզ չափ մախուր լինելը քայքայ քոյր եւ սալիս, միևնույն անգամ մեծանոգութեանք ներում եմ,

որ դուն ինձ չափ կեղտոտ լինես»:

Ամէն մի անարատ կին պիտի սոսկար այս քարոզից եւ պիտի բողոքէր մի այդպիսի բարոյականութեան դէմ, որը նորան ուղղակի դէպ ի անկումն է տանում: Իբրեւ շնորհալի դիտող, պ. Շիրվանզադէի աչքից չէ վրիպել մաքուր կնոջ այդ զգացումը: Երբ Ալալէրտեան «մեծահոգութեամբ ներում է իր կնոջը», նորա քոյրը Մարթան, որ մինչ այդ ատեն «ազատամիտ եւ լայն հայեացքներ լի տէր մի կին» էր, հեռանում է եղբոր տանից, ասելով. «Մոռանում ես կնոջդ յանցանքը, մոռացիր եւ ինձ»: Բայց այդ արդարացի, հոգեբանօրէն միանգամայն ճիշդ, հետեւաբար եւ բարձր գեղարուեստական գիծը պիտեսայի մէջ ծաղրուած է տաղանդաւոր կերպով, որովհետեւ դա հեղինակի հիմնական հայեացքին հակասակ է, ուստի իբրեւ Ալալէրտեանի բարձր բարոյականութեան մի ոգորում լի կոնտրաստ ներկայացուած է, այնպէս որ ամբողջ հասարակութեան ծիծաղն է շարժում: Մարթան չէ կարողանում փաստաբանել եւ ապացուցանել, բայց նա իր հոգու անարատութեամբ շա՛տ աւելի խոր եւ շա՛տ աւելի հեռուն էր տեսնում քան իւր եղբայրը: Իբրեւ մաքուր կին, նա ամբողջ էութեամբ զգում էր, որ այդ ներումը եթէ համայնական բնութիւն ընդունէ, պիտի կնոջ ամենասրբազան իրաւունքների հիմը փորէ, լայն ճանապարհ բանալով Գաբօներբ առջեւ. շուտով այդպիսի չէպքերում պիտի լինեն միմիայն ամենաազնիւ անհատները... Ինքը, «տգատամիտ», կրթուած եւ լայն հայեացքների տէր» Մարթան, շա՛տ լաւ էր զգում, որ դա իրաւունք չէ, այլ պարտաւանգութիւն, մինչ նորա իրաւարան եւ այսպիսի հարցերում իրաւադէտ եղբայրը եւ այսպիսի հարցերում իրաւադէտ, այլ գրեթէ անբարոյական մէկը, որ իր պարտազանցութիւնը ուրիշին տալիս է իբրեւ իրաւունք. — Այլ կերպ պիտի զգար ու մտածէր մեր վեհանձն պարունը եթէ ինքն էլ Մարթայի նման անարատ եւ անմեղ լինէր...:

Պ. Շիրվանզադէն հարցն այստեղ բուական նեղ է դրել: Նա վերցրել է կնոջ սխալը նորա ամուսնութիւնից առաջ որ, ինձ թուում է, բուական հաղուադէպ երևոյթ է մեղանում: Բայց հաղապէս չէ. մինչեւ անգամ շա՛տ յաճախապէս է կնոջ սխալը ե՛ւ ամուսնութեան մէջ...:

Ռուս հեղինակ Ն. Գանչենկօ, այդպէս էլ զընում է հարցը իր «Կեանքի արժէքը» պիեսայում, ուր հերոսուհի ափիկինը ստանց որ եւ է հիմնական պատճառների դաւաճանում է ա-

մուսնուն . սիրականը ինքնասպան է լինում եւ ամուսինը ներում է յանցաւոր կնոջը, վախնալով որ նա էլ կարող է անձնասպանութիւն գործել : —

Ինձ թուում է , որ պ. Շիրվանզադէն այս խազը գրել է ուս կեանքի եւ դրականութեան ազդեցութեան տակ , ուր , պէտք է ասած , ամենալայն եւ համբերող հայեացքներ են տիրում այսպիսի հարցերի վերաբերեալ : Այլ կերպ է նայում այդ հարցին ժամանակակից դրամատուրգներից մէկը , Ջուզեպպին : « Հայրենի տան » մէջ (Heumal) ծերունի զինուորականը հարցափորձի է ենթարկում իր դուստր Մագտային եւ միեւնոյն ժամանակ պատրաստուում է սպանել իրան կամ դստեր , սակայն երբ իմանում է նորա արատաւոր լինելը , կաթուածահար մեռնում է : Ի նկատի ունեցէք , որ սա մի հայր է եւ ոչ մի ամուսին , եւ չի կարողանում ներել մի աղջկայ , որը ներուելու բոլոր հանգամանքներն ունէր . նա մի գերասանուհի էր , իւր հայեացքներով մի ազատ թռչուն . . .

Միայն դրականութիւնն ու մամուլը չէ , որ զբաղւում է այս հարցով : Իրա վրայ երկար ժամանակ զլուխ են ջարդել նաեւ օրէնսդիրներն ու կառավարութիւնները :

Ճիշդ Շիրվանզադէի հաւասարութեան գաղափարից զրգուած , ի նկատի ունենալով մանաւանդ անմեղ մանուկների վիճակը , Գերմանիայում մի 10-15 տարի սրանից առաջ մի օրէնք հրատարակեցին , որով ապօրինի զաւակներու հայրերը պարտաւորում էին հոգալու իրենց որդոց ապրուստը : Սակայն , այդ մարդասէր օրէնքը մի զարմանալի հետեւանք ունեցաւ : Իրանհրատարակումից յետոյ ապօրինի ծնունդների թիւը զարմանալի կերպով սկսեց աճել : Մինչ այն ժուժկալ ու համեստ Գերմանուհիք սկսեցին իրանց վրէժն առնել տղամարդկանցից՝ բեռցնելով նրանց վզին բազմաթիւ երեխաներ , որոնց կերակրել էր հարկաւոր :

Հաւասարական այդ դառն փորձից յետոյ , օրէնքն ստիպուած էին փոխելու . . .

Արդ , պ. Շիրվանզադէի գեղեցիկ ու մարդասիրական թատերգութիւնից յետոյ , որին ա՛յնպիսի ջերմութեամբ ծափահարեցինք ամէնքս , պատրաստ ենք արդեօք ընդունելու եւ այն «սիւրպիբիզները» , որ Գերմանուհիների նման հայ օրիորդներն էլ պիտի ցանկային անել իրանց սիրականներին . . .

Մենք հարցը քննեցինք , առաջին՝ քննադատական տեսակէտով , եւ գտանք , որ այս խընդրում կնոջ եւ մարդու հաւասարութեան մասին խօսք լինել չի կարող : Երկրորդ՝ նոյն հարցը մենք քննեցինք բարոյական տեսակէտից , եւ տեսանք , որ Ալավէրտեանի տուածը իւր կնոջ իւր իրաւունքները չեն այլ իւր պարսագուցուրիւնն ու ցոխոքիւնը , եւ այստեղ իրաւունքի կամ արդարութեան մասին խօսք անգամ չի կարող լինել : Երրորդ՝ խնդիրը նկատեցինք իւր հետեւանքների գործնական տեսակէտովն եւ գտանք , որ դա լիովին վտանգաւոր է : Ուրեմն , եզրակացութիւն , — խաղի հիմնական միտքը ոչ միայն սխալ , այլ եւ վտանգաւոր է ամէն տեսակէտով : — Ղերցնելով մի բացառիկ երեւոյթ , հեղինակը մեզ մի բարոյականութիւն է քարոզում , որ արդիւնք է թիւրիմացութեան եւ իրան հետ միասին մեղ էլ այն համոզումն է ներշնչում , թէ Ալավէրտեանի կատարածը մի օրինակելի եւ վեհանձն գործ էր : Այս սխալը , ինչպէս տեսանք , միայն պ. Շիրվանզադէինը չէ . այդ սխալը կատարել են շատ մեծ ու փոքր եւրոպական հեղինակներ . կատարել է , ինչպէս տեսանք , եւ գերմանական Րայխստակը , ուր Բիսմարկի նման զլուխներ էին իշխում :

ԳՐԻԳՈՐ ՎԱՆՑԵԱՆ

ԹԻՖԼԻՍ

Յ. Գ. Այս թատերգութեան գեղարուեստական մասին մենք չենք խօսում . նրա առաւելութիւններն այնքան շատ են , որ պակասութիւններն ու թերութիւնները կարելի է միանգամայն անտես առնել : Հեղինակը մշակում է իր գործը՝ երկրորդ ներկայացման համար , որից յետոյ , եթէ ուրիշները մեզ չկանխեն , դուցէ կարողանանք մեր համեստ նրկատողութիւններն անել : Սաղի աջողութեան ամենաեռանդուն ծափահարողներից մինն էինք մենք , տեսնելով մեր առաջին վիպասանին մէջ եւ առաջնակարգ թատերգակի շնորհք : Թատրոնից մենք հեռացանք այն հաճելի զրտակցութեամբ , որ Սոււնդուկեանի տեղը թափուր չի մնալու այսուհետեւ :

Գ. Վ.

### ՊԱՏԳՎԱՄԱՒՈՐԻ ՄԸ Յ Ո Ի Շ Ա Տ Ե Տ Ր Է Ն

(Շար. 1)

Այսու հանգերձ որոշեցինք որ նախ Խրիմեան խօսի, զոր թարգմանելով Չերազ պիտի հաղորդէ պաշտօնէին, յետոյ պաշտօնէին պատասխանը առ Խրիմեան պիտի թարգմանուի եւ Խրիմեանն ալ պատասխան առնելէ յետոյ Չերազ եւ պաշտօնեայ պիտի շարունակեն խօսակցութիւննին՝ պայմանաւ որ եթէ անոնք երկարին, երբեմն երբեմն Խրիմեանի թարգմանուին եւ անոր հակիրճ պատասխանները հաղորդուին :

Այս կերպով համաձայնեցան եւ գացին :  
Վերադարձին իմացանք Շուվալովին կարծիքները . «Հայ վալի մը չենք կրնար ըսել, ըսեր է, բայց եւրոպական քոմիսիոնի մը հսկողութիւնը կարելի է » :

Խրիմեան կ'ըսէ թէ Շուվալով աւելի անկեղծ խօսեցաւ : Չերազ պատմեց թէ Շուվալով ըսեր է Նարպէյի «Դու ի Բեթերդպուրկ աւելի քիչը կ'ուզէիր, հիմակուան ըսածիս ինչ պէտք է ըսես» : Նարպէյ պատասխաներ է «այդ է մեր բոլոր ուզածը» :

Նարպէյ կ'ըսէ թէ ինքը ի Բեթերդպուրկ կայսեր յիշատակագիր մը տուեր է որուն մէջ «հայ վալի» կայ, մինչ այժմ ի միջի այլոց Շուվալովի ըսեր է թէ միւս քրիստոնէից վիճակակից ըլլանք, այս է մեր բոլոր ուզածը» . ապա սոր մէջէն չկրցանք ելնել :

Խորէնի ծուռ ու մուռ ընթացքը յայտնի կ'երեւի . այսպիսի պաշտօնի մէջ իրեն երբեք չի վստահուիր . իրեն համար մասնաւոր բրոկրամ մ'ունի, զոր յաջողցնելու համար ամէն գաղտնի բանակցութիւնները կ'ընէ եւ զմեզ ալ մոլորցնել կը ճգնի :

Իր բրոկրամն է .  
«Ռուսահայ մը վայի գնել Հայաստանի, օրինակի համար Մէլիքովը :

«2 . Կիլիկիայով զմեզ զբաղեցնել եւ վերին Հայաստանէն վար իջնել՝ Ռուսին առջեւ թու մը չըլլալու համար :

«3 . Ռուսական օքիւրասիոնը »

(1) Տես Անահիտ, Գ. արի քիւ 2 :

— Խրիմեան Թաշարկեց՝ առաջին անգամն ըլլալով՝ որ գիրգրուի Սուլպէրիի եւ Պիսմարքի՝ ունկնդրութեան համար, իսկ Շուվալովին պատասխանել ըրած առարկութեան համար :

Վատինկթոնին պիտի մը պատրաստեց Չերազ որուն մէջ խորհրդարար պատմեցինք Շուվալովին ըսածները եւ մեր բաղձանքը ու ֆորմիւլը ներկայացուցինք որ ահաւասիկ :

«Կազմութիւն Հայաստանի հայ վալիով մը, Լիբանանու նման, որուն կանոնագիրը խմբագրուի եւրոպական քոմիսիոնէ մը որն որ պիտի հսկէ անոր գործադրութեան վրայ » :

2 Յուն . — Այցելութիւն տուին Քարաթուրքի, Սատուլահի, Ժէօմենիին եւ Տէլիանիին :

Խրիմեան որ մերթ յուսահատ եւ քիչ անգամ յուսալից է, այսօր ամենամեծ ճշմարտութիւն մը խոստովանեցաւ «մարդ ինքիբնէն պէտք է աշխատի որ փորձուի» ըսաւ :

— Շատ ուշ մնացինք, ըսի, շատ պարագայներով ժամանակ անցուցինք, անձնակա-նութիւններով պարապեցանք, գէթ սակէ հոքը աշխատինք, բոլոր ուժերնիս Հայաստան ամփոփենք, ամենքս պէտք է դիմենք հոն, եթէ կ'ուզենք զայն կենդանացնել եւ այսօրուան աշխատութիւններնուս նպատակն ալ Հայաստան այնպիսի վիճակի մէջ գնել է որ կարենայ գաղթած Հայերուն կենաց, աշխատութեան, ինչքի եւ պատուոյ ապահովութիւն առթել՝ որպէսզի հոն վերադառնան . միւս կողմանէ եւրոպայի մէջ մեծ ուժ եւ գործունէութիւն ունենալու է, զի պէտք է որ եւրոպայի լաւ ճանչցուինք : Ինչ որ ալ ըլլայ մեր մէջ եղած անհամաձայնութիւնները, մէջնորնիս մնալու են, ինչպէս որ այսօր ատոր մէկ գեղեցիկ օրինակը կուտանք . չորսերնիս ալ իրարու անհամաձայն տարրեր էինք եւ ենք տակաւին ինչ ինչ տեսութիւններով, եւ հիմա միասին եկեր, միաբաներ եւ մէկ սիրտ եղած այս մեծ դորձին համար կ'աշխատինք :

ՍՏԵՓԱՆ ՓԱՓԱՋԵԱՆ

(Շարունակելի)



ՄԻՈՒԹԵԱՆ ԱՆԳԻՐԸ

—o—

Միութեան խնդիրը առաջին իրականացում մը ունեցաւ արդէն. Վերակազմեալ Հնչակեաններն ու հին Հնչակեանները զիրենք բաժնող բոլոր խնդիրներուն վրայ համաձայնութիւն գոյացուցած ու միացած են: Հնչակեան կուսակցութիւնն իր նախկին միութիւնը վերագտած է այլեւս:

Այս իրողութիւնը ամենէն ամուր պատասխանն է բոլոր անոնց որ պատրաստուած էին, այն պարագային ուր Դրօշակեանց եւ Վեր. Հնչակեանց միջեւ Միութեան ջանքերը վեժէին, ասոր պատասխանատուութիւնը Վեր. Հնչակեաններու անկեղծ միութենասէր չըլլալուն(!) վերադրել: Այս իրողութիւնը ցոյց կուտայ թէ Վեր. Հնչակեանները բացարձակապէս անկեղծ էին իրենց Միութեան կոչը հրատարակած ատեն, քանի որ այդ կոչին մէջ իրենց յայնաժամ զգացումները գործնականապէս ապացուցին՝ յաջողցնելով Միութիւնը հին Հնչակեաններուն հետ, — միութիւն մը որ նոյնքան դժուարութիւններ կը ներկայացնէր որքան Դրօշակեանց հետ միութիւնը:

Այդ իրողութիւնը կ'ապացուցանէ, ատկէց զատ, թէ «ուղղակի բանակցութեանց» սխաւեմը, զոր իբրեւ ամենէն գործնականը պաշտպանեցի «Անահիտ» ի բոլոր յօդուածներու մէջ, իրօք լաւագոյնն էր: Վեր. եւ հին Հնչակեանները, առանց ո՛րէն է միջնորդի դիմելու, ուղղակի իրարու հետ բանակցութեան մտան, եւ մէկ քանի ամիս վիճելէ յետոյ՝ յանդեցան բազմացուած արդիւնքին, եւ թէ Միութեան խնդրոյն վրայ դրած յօդուածներու մէջ մինչև երբ որ վերակազմեալ եւ հին Հնչակեաններուն Միութեան մասին բնաւ խօսք չըրի, պատճառը այն էր որ գիտէի թէ անոնք բանակցութեան մէջ էին իրարու հետ եւ աւելորդ, նոյն իսկ վնասակար կը հկատէի այդ դեռ չլուծուած հարցին վրայ հրապարակաւ ունէ կարծիք յայտնել, — համոզուած ըլլալով որ ունէ միջամտութենէ, հետեւաբար ունէ դժուարութեանց բարդացումէ զերծ, երկու խմբակները, իրարու հետ զուլս գլխի վիճելով, եւ իրենց նպատակակէտ ունենալով միմիայն ազգին բարեքը, պիտի յաջողէին յաղթել բոլոր դժուարութիւններուն:

Այս իրողութիւնը անշուշտ պիտի ունենայ բարերար ազդեցութիւն մը Դրօշակեան կուսակցութեան վարիչներուն վրայ: «Շարժում»ը, որ անպաշտօն թերթ մըն է, բայց Դրօշակեան բանակին կարգ մը ներքին ձգտումները կը պատկերացնէ, արդէն այդ ազդեցութիւնը կրած ըլլալուն տպացոյցը տուաւ. այդ թերթը վերջերս սկսած էր բացէ ի բաց հակամիութենական յօդուածներ հրատարակել. «Դրօշակեանները, կ'ըսէր իր վերջին յօդուածներէն մին, ունէ զոնորութիւն ընելու տրամադիր չեն Վերակազմեալ Հնչակեաններուն հետ միանալու համար, երկու Դրօշակեան պատգամաւորական ժողովներ արդէն մերժողական պատասխան տուած են ուղղակի բանակցութեանց առաջարկին, որովհետեւ Վեր. Հնչակեանները ոչ մէկ ուժ չեն ներկայացներ ու բան մը ըրած չեն»: Դրօշակեանց «կարգապահութեան»ը մասին յարգանք յայտնած եմ միշտ, բայց «Շարժում»ին «արեւմտեան բիւրօ»ին պաշտօնական պատասխանէն առաջ, Դրօշակեանց մէկ քանի խմբակներու որոշումը հրապարակելու եւ ասով բոլոր Դրօշակեանց միտքը Միութեան դադափարէն պաղեցնելու փորձը կարգապահութեան դէմ ծանր մեղանշում մը թուեցաւ ինծի. արդ, այն «Շարժում»ը որ այս արհամարհական գիրքը կը բռնէր Վեր. Հնչակեաններուն հանդէպ, վեր. եւ հին Հնչակեաններուն միութեան լուրն առնելուն պէս՝ լեզուն փոխեց եւ հրատարակեց յօդուածներ ուր ո՛րք աւելի յարգալից է Հնչակեաններուն համար եւ ուր այդ իրողութիւնը գնահատուած է իբրեւ լաւ գործ մը:

Կը մնայ այժմ «Արեւմտեան բիւրօ»ին պատասխանը՝ Վեր. Հնչակեաններուն հրաւերին. այդ պատասխանը հաստատական պիտի ըլլայ անտարակուսելի կերպով: Չեմ կրնար երեւակայել որ «արեւմտեան բիւրօ»ն կարող ըլլայ Վեր. Հնչակեաններուն տալ պատասխան մը այն ոգով որ «Շարժում»ին քացասական յօդուածները կը տողորէր: Դրօշակեան կուսակցութիւնը որ տարի ու կէս առաջ կը հաւանէր Միութեան համար բանակցութիւններու մտնել (եւ հետեւաբար զոնորութիւններ յանձն առնել) Վեր. Հնչակեան կուսակցութեան հետ, այնպիսի ատեն մը երբ Վեր. Հնչ. կուսակցութիւնը՝ Արփիարեանի մը ձեռքը մնացած՝ չափ քիչ փայլուն վիճակ մը ունէր, անկարելի է ըմբռնել որ այդ նոյն Դրօշակեան կուսակցութիւնը մերժէ

նոյն իսկ բանակցութեանց փորձ մը ընել  
 Հնչակեաններուն հետ, հիմա որ անոնք  
 «Շարժում»ին ու «Հայրենիք»ին իսկ խոստո-  
 վանութեամբ, ճշմարտապէս վերանորոգուած,  
 կենդանացած եւ զօրացած են:

Արդէն, տղայական է կարծել թէ վեր. Հնչ.  
 կուսակցութիւն ըսուածը, հինգ վեց տարիէ է  
 վեր. Ռիայն գոյութիւն ունենալուն համար, մի-  
 միայն հինգ վեց տարիէ ի վեր գործել սկսած  
 անձերէ կը բաղկանայ. այդ կուսակցութիւնը  
 կը բաղկանայ տասը տարիէ ի վեր գործող,  
 Հնչակեան գործունէութեան ամենէն կարեւոր  
 արարքներուն մասնակցած անձերէ: — Հին եւ  
 նոր Հնչակեանց միութեամբը, ամէն թիւրթի-  
 մացութիւն վերջնապէս կը փարատի: «Արեւ-  
 եւմտեան բիւրօ»ն իր զէմն ունի այժմ  
 ամբողջ Հնչակեան կուսակցութիւնը, այն  
 Հնչակեան կուսակցութիւնը որ առաջին նշա-  
 նը տուած է յեղափոխական գործունէութեան՝  
 երբ Դրօշակեանք զեռնոր կը սկսէին կազմա-  
 կերպուիլ, եւ որ իր յարուցած Սասունի զէպ-  
 քին հետեւանքով ձեռք ձգած է ամենէն կա-  
 րեւոր արդիւնքը զոր հայկական զատը մինչեւ  
 ցարդ վաստկած ըլլայ, այսինքն 1895ի մեծ-  
 րանտոմբ:

«Շարժում» լեզուն կը փոխէ Հնչակեանց  
 հանդէպ, բայց ոչ Միութեան գաղափարին  
 նկատմամբ: «Հին եւ նոր Հնչակեանները միա-  
 ցեր են», կ'ըսէ, շատ լա՛ւ, թող Հնչակեանք  
 ուրեմն սկսին գործել. հարկ չկայ միանալ  
 Դաշնակցականներուն հետ»: Միայն, հետեւե-  
 լով «Անահիտ»ի վերջին յօդուածին մէկ քանի  
 սողերուն, կ'աւելցնէ թէ, առանց միանալու,

Հնչակեանք եւ Դրօշակեանք պէտք է ջանան  
 համերաշխ եւ հաշտ ըլլալ իրարու հետ եւ  
 կարեւոր պարագաներու մէջ համաձայնու-  
 թեամբ գործել: Այս վայրկեանիս ուր «Արեւ-  
 մտեան բիւրօ»ն զեռ իր վերջնական պատաս-  
 խանը չէ տուած Հնչակեաններուն հրաւերին.  
 կը կարծեմ թէ «Միութիւն պէտք չէ» ըսելը  
 այնքան անիմաստ է որքան քիչ ազգասիրա-  
 կան: Միութիւնը պէ՛տք է, եւ ամենքս բաղ-  
 ճալու ենք որ ան իրագործուի: Ոչ ոք պէտք  
 չէ այժմէն մտքերը պղտորէ եւ արդիլէ Միու-  
 թիւնը, որ վերջապէս՝ անկարելի չէ: Լաւագոյ-  
 նը բացարձակ միացումն է, — ատի պէտք է  
 ընդունիլ. եւ պէտք է ջանալ, ամենայն ան-  
 կեղծութեամբ եւ ամենայն զոհաբերութեամբ,  
 որ ատի կատարուի: Ուրեմն պէտք է որ նախ  
 բանակցութիւն մը տեղի ունենայ Միութիւնը  
 հաստատելու համար Դրօշակեանց եւ Հնչակ-  
 եանց միջեւ, որպէս զի միակ մարմնի մը մէջ  
 կեդրոնանան հայ ժողովրդին բոլոր ձիգերը:  
 Թիէ «անհնար» ըլլայ Միութիւնը, այն ատեն  
 պէտք է որ Դրօշակեանց եւ Հնչակեանց լիա-  
 դօրները ջանան երկու կուսակցութեանց մի-  
 ջեւ մշտական համերաշխութիւն եւ կարեւոր  
 պարագաներու մէջ համաձայն գործունէու-  
 թեան պայմանագրութիւն մը կնքել:

Ուրիշ բան չի մնար ուրեմն այլեւս բայց  
 եթէ սպասել «Արեւմտեան բիւրօ»ին պատաս-  
 խանին, որ հաստատական պիտի ըլլայ, եւ  
 Դրօշակեան ու Հնչակեան լիազօրներու հան-  
 դիպումին, որ անխուսափելի եւ անհրաժեշտ  
 իրողութիւն մըն է:

Բալիզ, 14 ապրիլ 1902 Ա. Զ.

Բացում է 1902 թ. բաժանորդագրութիւնը

# Մ Ո Ւ Ր Ձ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ  
Ա Մ Ս Ա Գ Ր Ի  
Նոր շրջան Բ. տարի

Խմբագիր-հրատարակիչ Կ. ԿՐԱՍԻՆՆԻԿԵԱՆ

Խմբագրութեան անդամներն են՝  
ԼԵՒՈՆ ՍԱՐԳՍԵԱՆ և ԼԵՕ

Բաժանորդագիրը. — Ռուսաստանում տարեկան 10 ռուբ., վեցամսեայ 6 ռուբ.: Արտասահման տարեկան 12 ռուբ., վեցամսեայ 7 ռուբ.:

Հասցէ փոխելու համար պէտք է ուղարկել 40 կոպէկ:

Սպառիկ կամ ձրի ոչ ոքի չէ ուղարկում ՄՈՒՐՁ:

Հասցէ՝ Tiflis, Rédaction de la revue  
"Mourtch"

# ԼՈՒՄԱՅ

Գրական հանդէս

Կը հրատարակուի տարեկան երկու դիւրք:

Բաժանորդագիրն է, երկու գրքի համար 3 ռուպլի, իւրաքանչիւր գրքին առանձին՝ 2 ռուպլի:

Դիմել թիֆլիս, խմբագրութիւն «Լումայ»ի:

# ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ՊԱՏԿԵՐԱԶՍՐԴ

Կը հրատարակուի տարեկան երկու դիւրք:  
Երկու գրքի տարեկան բաժանորդագիրն է՝ 3 ռուպլի կամ 10 ֆրանք:

Դիմել՝  
Ervand Lalayantz, Séminaire Nersissian  
Tiflis, Caucase

# ԱՂԲԻԻՐ

Պատկերազարդ ամսաթաթերթ

Բաժանորդագիրն է՝ տարեկան, Ռուսիոյ համար 3 ռուպլի, արտասահմանի համար 8 ֆրանք:

Հասցէն՝ Tiflis. Rédaction de la revue AGBUR

# ՀԱՆԴԵՍ

ԱՄՍՕՐԵԱՅ

ՈՒՍՈՒՄՆԱԹԵԹ

Կը հրատարակուի ամէն ամսոյ սկիզբը:  
Բաժանորդագիրն է, արտասահմանի համար, տարեկան 10 ֆրանք, վեցամսեայ 6 ֆրանք:  
Ռուսիոյ համար, տարեկան 4 ռուպլի, վեցամսեայ 2 ռուպլի 50 կոպէկ:

Դիմել՝ A la Rédaction de la Revue «Hantess»  
VII/2 Mechitaristengasse, 4. VIENNE Autriche

# ՏԱՐԱԶ

Պատկերազարդ շաբաթաթերթ

Բաժանորդագիրն է տարեկան Ռուսիոյ համար 6 ռուպլի, արտասահմանի համար 15 ֆրանք:  
Դիմել՝ Tiflis. Rédaction du journal TARAZ

# ԱՐԱՐԱՏ

Պաշտօնական ամսագիր հայրապետական  
աթոռոյ Ս. Էջմիածնի

Բաժանորդագրութիւնն է, տարեկան՝ Ռուսաստանի համար՝ 4 ռուպլի, արտասահմանի համար՝ 13 ֆրանք:

Կը խնդրուի բաժանորդներէն որ իրենց հասցէները մաքուր եւ անսխալ գրեն:

Դիմել՝ Rédaction de la Revue «Ararat»  
ETCHMIADZIN (Caucase)

ԱՆՍՆՆԵՐԸ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Անահիճը կը հրատարակուի ամիսը անգամ մը :  
 Բաժանորդագրինն է տարեկան՝ 10 ֆրանք (Ֆրանսա), 12 ֆրանք (օտար երկիրներ),  
 2 տոլար (Ամերիկա), 5 բուպլի (Ռուսիա) :  
 Վեցամսեայ՝ 10 ֆր. (Ֆրանսա), 6 ֆր. (օտար երկիրներ), 3 տոլ. (Ամերիկա), 3 բուպլ. (Ռուսիա) :  
 ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐԻՆ ԿԱՆՆԻԿ Է՛  
 Ձեռագիրները են չեն պարճուիլ :  
 Կ'ընդունուին ազգեր :

Նամակ, յօուած եւ բաժանորդագրին ղրկել հետեւեալ հասցէին՝  
 A. TCHOBANIAN  
 17. RUE LA BRUYERE  
 PARIS

«ԱՆՍՆՆԵՐԸ»Ի ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐԸ

- |                   |                              |
|-------------------|------------------------------|
| Թիֆլիս —          | Պարոն Գէորգ Մելիք-Կարապետեան |
| Պաքու —           | » Ս. Մ. Մոցիկեան             |
| Կահիրէ —          | » Ա. Ա. Թորգոմեան            |
| Ռուսնուք —        | » Նշան Ս. Թորոսեան           |
| Ֆիլիպէ —          | » Ա. Տեմիրճիպաչեան           |
| Պուքրէշ —         | » Արիս Լազար                 |
| Դաւրէժ —          | » Տր. Կ. Փաշայեան            |
| Նիւ-Նորք —        | » Կստարեան                   |
| Բրովիտէնս —       | » Նաղարէթ Թաթեոսեան          |
| Ճրեզնօ —          | » Աւագ Կարապետեան            |
| Իսթ Ուոթըրթաուն — | » Մանուկ Գալստեան            |
| Ուոթըր —          | » Երուանդ Յակոբեան           |
| Չիքաղօ —          | » Ա. Կարակալուրեան           |
| Պոսթոն —          | » Կ. Յ. Գարակիւլեան          |